

Ֆ. Փ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՖԵՆՈԼՈԳԻԱՅԻ  
ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ  
ԲԱՅԱՏՐԱԿԱՆ  
ԲԱՌԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

CC

ll  
//  
//  
//  
//



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

Ф. П. АИРАПЕТИАН

АРМЯНО-РУССКИЙ ТОЛКОВЫЙ  
СЛОВАРЬ  
ПО ФЕНОЛОГИИ

ԴԱՎԼԵՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐ. ԱԺԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԽԱՍՏԻՏՈՒՏ

2

Ֆ. Փ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՖԵՆՈԼՈԳԻԱ  
ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ  
ԲԱՌԱՐԱՆ

A 766/2  
II



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1987

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝ կենսաբանական գիտությունների  
գոկտոր Լ. Վ. Հարուրյանյան, բանասիրական գիտությունների  
թեկնածու Լ. Բ. Պետրոսյան

Գիրքը հրատարակության են՝ մրաշխավորել գրախոսներ՝  
աշխարհագրական գիտությունների թեկնածու Գ. Բ. Գրիգորյանը  
և կենսաբանական գիտությունների թեկնածու Վ. Ե. Ռուկանյանը

### Հայրապետյան Ֆ. Փ.

Հ 300 Ֆենոլոգիայի հայ ոռուսերեն բացատրական բառա-  
րան /Պատ. խմբ.՝ Լ. Վ. Հարուրյանյան, Լ. Բ. Պետրոս-  
յան; ՀՍՍՀ ԳԱ. Հր. Աճառյանի անվ. լեզվի ին-տ./ Եր.:  
ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1987.—115 էջ. նկ.

Բառարանն ընդգրկում է ֆենոլոգիայի շուրջ 530 տերմին ու հաս-  
կացություն:

Բառարանն օգտակար կարող է լինել կենսաբաններին, աշխար-  
հագրագետներին, գյուղատնտեսության մասնագետներին, նախա-  
գծաղներին ու շինարարներին, մեղվաբուծության և բնության պահ-  
պանության հարցերով դրադվողներին, բարձրագույն ուսումնական  
հաստատությունների և տեխնիկումների համապատասխան ֆա-  
կուլտետների ուսանողներին:

Հ 4602030000  
763 (02) — 87

ԳՄԴ 28.081.2y2

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987

Բոլորի և կենդանիների կյանքում, անկենդան բնության մեջ կան բազմարիվ երևոյթներ, որոնք սերտորեն կապված են տարվա եղանակների հաշորդական փոփոխման հետ և կրում են սեղոնային բնույր: Այդպիսի երևոյթների սկաման և ավարտի ժամկետների օրինաշափուրյունների ուսումնասիրությամբ զբաղվում է ֆենոլգիան: Տարբեր երկրներում, այդ բվում նաև Հայաստանում, բնուրյան սեղոնային առանձին երևոյթների դիտումներ կատարվել են հետոց: Ժամանակակից զիտական ֆենոլգիայի հիմքը դրվել է XVIII դարում: Ֆենոլգիայի հիմնական խնդիրն է՝ դիտել բույսերի ու կենդանիների և դրանց համակեցուրյունների զարգացման տարբեր փոփոխուրյունները և գրանցել ժամկետները: Տարբեր վայրերում կամ նույն վայրում, բայց տարբեր տարիներին կատարված դիտումների տվյալները համեմատվում են: Սակայն ֆենոլգիան զբաղվում է ոչ միայն դիտումներով: Նրա առջև խնդիր է դրված նաև բացահայտել բուսական և կենդանական աշխարհի սեղոնային զարգացման օրինաշափուրյունները՝ կապված շշակա պայմանների հետ, որոշել եղանակային և այլ գործոնների ազդեցուրյունը օրգանիզմի զարգացման ու անի սեղոնային ոիքմի վրա և այլի:

Ֆենոլգիայի զարգացման գործում մեծ է Եվրոպայի մի շարք երկրների, հատկապես Սովետական Միուրյան գիտնականների դերը: Վերջիններս մեծ աշխատանք են կատարել և շարունակում են կատարել ֆենոլգիայի մի շարք ժամանակակից տեսական հարցերի մշակման և դրանք գործնականում կիրառելու ասպարեզում: Սակայն մինչեւ այսօր ո՞չ ուստեղեն, ո՞չ էլ միուրենական հանրապետուրյունների որևէ ազգային լեզվով ամբողջական ֆենոլգիա-

կան բառարան չի կազմվել: Սույն բառարանը մեր երկրում այդ բնագավառի առաջին փորձն է:

Բառարանում ընդգրկված են շուրջ 530 ֆենոլգիական տերմին և անվանում: Առանձին բացատրույթուններ հանդիպում են առաջարկված արված (օրինակ, ֆենոլգիական տարրապատկեր): Բառարանը կազմված է տերմինարանի սկզբունքով: Տերմիններն ու անվանումները համարակալված են ու դասավորված այբբենական կարգով: Բերված են տերմինների ուսւերեն համարժեքները, տրված է յուրաքանչյուր տերմինի կամ հասկացության համառոտ բնորոշումը:

Հնարավոր է, որ բառարանում բերված տերմինների և անվանումների ոչ բոլոր բնորոշումները անվիճելի համարվեն: Թիտողուրյուններ կարող են լինել և շարադրանի համառոտուրյան հարցում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այս բառարանը շատ դեպքերում, հեղինակի կարծիքով, նիշտ համարվող բնորոշումների շարադրանին է: Բացի այդ, այն ոչ թե տեղեկատու, այլ բացատրական բառարան է և հանրագիտարանային լրիվուրյան հավակնություն շունի:

Եթե տերմինը կամ անվանումը ունի նաև երկրորդ իմաստ, ապա բնորոշման մեջ դրանցից յուրաքանչյուրը համարակալված է: Կան տերմիններ և անվանումներ, որոնք ունեն մի քանի հոմանիշներ: Հոմանիշների առկայության դեպքում բացատրույթունը տրված է նիշտ և հանձնարարելի տերմինի բառահոդվածում: Մյուսները տրվում են հղումով (օրինակ, հանձնարարվում է ՏԵՐԵՎԱՐԱՐԱԿԱՆ տերմինը, իսկ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՏԵՐԵՎԱՐԱՐԱԿԱՆ տերմինը, որ նույն իմաստով օգտագործում են որոշ հեղինակներ, տրված է հղումով): Բաղադրյալ տերմինները որպես գլխարք տրվում են հիմնականում ուղիղ շարադրանուրյամբ: Գրականուրյան մեջ երբեմն հավասար իրավունքներով օգտագործվում են նույն տերմինի կամ անվանման լրիվ և կրնատ տարբերակները: Բառարանում դրանք տրված են միասին: Ըստ որում, օգտագործման է առաջարկվում այն տարբերակը, որը զբր-

ված է առաջինը (օրինակ, ՖենոլիֆիԱԿԱՆ ԿՈՐ, ՖԵՆՈԿՈՐ: Հանձնարարվում է ՖԵՆՈԼԻՖԻԱԿԱՆ ԿՈՐ ձեր): Բառարանում նախապատվորյունը տրված է հայերեն տերմիններին, երեմն՝ գիտական գրականուրյունում բաղադացիուրյան իրավունք ստացած միշազգային տերմիններին (օրինակ, ՖԵՆՈԼԻՓԻԱՆ):

ՏԵՐՄԻՆՆԵՐԸ և անվանումները հայերեն են դարձված հիմնականում պատճենավորման սկզբունքով: Առանձին դեպքերում, նկատի ունենալով մեր լեզվի իմաստային նորուրյունները, հեղինակը առաջարկում է միշազգային կամ ուսական տերմինների հայերեն իր տարբերակները (օրինակ, ՏԱՐԻՄ.ՊԱՏԿԵՐԸ լՈՒՍԱԿ բարգմաններու կամ ՍՊԵԿՏՐ բողնելու փոխարեն և այլն): ՍԵԶՈՆ և ԵՂԱՆԱԿ տերմինների օգտագործման խառնաշփորուրյունից խուսափելու համար նպատակահարմար է համարվել առաջինը օգտագործել ուղես ուստերեն ՀԵՅԶ տերմինի և այդ շարքի տերմինների հոմանիշ: Հայերենում այն սովորաբար բարգմանում են ԵՂԱՆԱԿ, բայց, մեր կարծիքով, այդ տերմինը ավելի շատ համապատասխանում է ուստերեն ԽՈԶՈԴԱ-ին: Նույն սկզբունքով տարբերակել ենք նաև փոլ, էտապ, բնրացաշրջան տերմինները: Կատարված է նաև տերմինաշխնական որոշ աշխատանք: Առաջին անգամ օգտագործման առաջարկվող տերմինները բառարանում բերված են աստղանիշով: Բառահոդվածներում բառարանում օգտագործված այլ տերմինները և անվանումները հիշատակելիս տրվում են շղագով: Լրացուցիչ տեղեկուրյունների համար այլ տերմիններ ու հասկացուրյուններ հղելիս, վերջիններս գրված են մեծատառ: Մեր նպատակը չի եղել բառահոդվածներում տալ տերմինների ստեղծման պատմուրյունը և հեղինակների ազգանունները: Բացառուրյուն են կազմում նորագույն տերմինները, որոնց հեղինակների ազգանունները նշված են: Վերջում տրված է ուստերեն տերմինների և հասկացուրյունների այբբենական ցանկ՝ համապատասխան համարանիշերով:

Խորին երախտագիտությամբ նշում ենք, որ ֆենոլո-  
գիայի բառարանը կազմելիս մշտապես օգտվել ենք կեն-  
սաբանական գիտությունների դոկտոր Ի. Ն. Ելագինի, կեն-  
սաբանական գիտությունների քեկնածուներ Վ. Ե. Ուկան-  
յանի և Ս. Վ. Շչեգոլեայի, աշխարհագրական գիտություն-  
ների քեկնածուներ Ռ. Ս. Մկրտչյանի, Ա. Ա. Ասլանյանի և  
Գ. Բ. Գրիգորյանի, բանասիրական գիտությունների քեկ-  
նածուներ Լ. Բ. Պետրոսյանի և Ռ. Ն. Շալունցի օգտակար և  
գործնական խորհուրդներից:

Հեղինակը գոհոնակությամբ կընդունի արված դիտողու-  
թյուններն ու առաջարկությունները: Դրանք սիրով հաշվի  
կառնվեն բառարանի վրա կատարվելիք հետազա աշխա-  
տանքների ժամանակ:

///

///

65

11

1. ԱԳՐՈԿԱՂԱՎԱՐԻ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ—ԱԳՐՈԿԼԻՄԱՏՈԼՈԳԻԱ ՏԵՇԱ

2. ԱԿՐՈՎԿՄԱՆՑԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ—АГРОКЛИМАТИЧЕСКИЕ КАРТЫ Կիմայկան պայմանները և գյուղատնտեսական արտադրության օբյեկտների ու պրոցեսների վրա այդ պայմանների ազդեցությունը պատկերող քարտեզներ:

3. ԱԿՐՈՂԵՐՎԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒՄՆԵՐ—ԱԳՐՈՄԵՏԵՈՐԾՈՒՅԹՆԵՐԸ  
ԼՈԳԻԿԵՍԿԻԵ ՀԱԲԼԻՈԴԵՆԻЯ Օդերկութարանական տարրերի (չերմաստիճան, օդի խոնավություն, մթնոլորտային տեղումներ և այլն), Հողի խոնավության ու գյուղատնտեսական կուտարաների վիճակի, դաշտային աշխատանքների գուգորդված դիտումները: Ազրող օդերկութարանական հիմնական դիտումներից են Հողի վարելաշերտի չերմաստիճանի, մթնոլորտային տեղումների, ձյունածածկութի, մթնոլորտի ու Հողի խոնավության, Հողի արմատակալած շերտի սառչելու և հալլչելու, բույսերի զարգացման փուլերի, գյուղատնտեսական մշակովի բույսերի աճի և վիճակի վերաբերյալ դիտումները: Նշվում են նաև օդերկութարանական անբարենպաստ երկույթների, վնասատուների և հիվանդությունների հետևանքով բույսերի վնասակածության աստիճանն ու բնույթը: Օդերկութարանական գործոնների ու գյուղատնտեսական մշակովի բույսերի աճի, զարգացման, վիճակի փոփոխությունների դիտումները կատարվում են միաժամանակ:

4. ԱՐՄՈՊԵՏԵՐԵՎԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ—ԱԳՐՈՄԵՏԵՈՐՈԼՈԳԻԱ Գյուղատնտեսական արտադրության ագրոգենևոլիթաբանական պայմանները ուսումնամիջոց, դրանց արդյունավետ օգտագործմանն ու բարձր արտադրանք ստանալուն նպաստող գիտություն:

5\*. **ԱԶԴԱՆՆԱՆԱԲՈՒՅՆ**—СИГНАЛЬНОЕ РАСТЕНИЕ *Բույս*, оно  
զարգացման այս կամ այն ֆենոպիհական փուլով կարելի է կանխազու-  
շակել հիմնական բույսի կամ կենդանու որոշվող ֆենոփուլի սկզբ-  
ման ժամկետը: *Տերմինն* առաջարկել է *Ս. Ի. Խոմչենկոն*:

6. ԱՎԱՋԵՐՄԱՅԻՆՈՂՔԻԱԿԱՆ ՎԵՐԱՌԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ—ГАЛОТЕРМО-  
ФЕНОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ Օդի ջերմաստիճանից և Հողալու-  
ծովայի բարոր խտությունից բուկարի ֆենոլոգիական փուկերի փոփոխման

Կախվածության էկոֆենոլոգիական վերլուծություն: Տերմինն առաջարկել է Ի. Ն. Բեյդեմանը:

7. ԱՃՄԱՆ ԿՈԽ—ԿՕՆՍ ՀԱՐԱСՏԱՆԻЯ Յողունի բուն ծայրը: Կազմված է առաջնային մերիսթեմային հյուսվածքից և պաշտպանված է բողբոչը կազմող տերևներով:

8. ԱՃՈՒՄ—ՕՏՐԱСՏԱՆԻԵ Վեգետացիայի սկզբնական փուլ: Ամառնականաշխատություն է խոստարություն կազմելու այդ փուլը սկսվում է հոդի մակերեսին ծիլերի երեալով և ավարտվում է տերեւակալմամբ: Միաժյա բույսերի համար այն համապատասխանում է առաջին ծիլերի երեալուն, թփերի համար՝ բողբոչափթթմանը: Զմեռնականաշխատություն այս փուլը շռնեն:

9. ԱՄԱՐ.՝ ԼԵՏՈ Երկրագնդի մակերեւութիւն վրա արեգակնային էներգիայի առավելագույն հաշվեկշռի սեղոն: Հյուսիսային կիսագնդում ընդունված է համարել տարվա ամառային արևադարձից մինչև աշնանային գիշերահավասարը ընկած ժամանակահատվածը: Երկրագնդը բարեխառն գոտիներում ամռան կիմայական սկիզբը և ավարտն ընդունված է օդի շերմաստիճանի հաստատում անցումը  $15^{\circ}$ -ից բարձր և ցածր: Յուրաքանչյուր որոշակի վայրի համար ամռան առանձնացումը ըստ ֆենոլոգիական հատկանիշների ամենից օրիեկտիվն է, սակայն առաջմա այդպիսի առանձնացման կուռ մշակված սիստեմ չկա: Այն հնարավոր է մշակել միայն առանձին ոչ մեծ աշխարհագրական շրջանների համար Բույսերի զարգացման ամռանը բնորոշ ֆենոլոգիական երեւութները ըսկըսվում են ուշ ծաղկող բույսերի ծաղկաթափով և պտուղների կազմավորմամբ ու ավարտվում տերևների աշնանային գոմնափոխումը սկսվելու հետ: Զերմաստիճանի բարձրացումը  $15^{\circ}$ -ից խորհրդանշում է ամռան կիմայական սկիզբը. Կարճակյաց բույսերը շորանում են, հասունանում են վաղահաս պտուղները, սերմերը, ոեռ շարունակում են ծաղկել մի շաբաթ ուշ ծաղկող ծառատեսակներ ու թիւեր: Երբ շերմաստիճանը հասնում է  $20^{\circ}$ -ի, սկսվում է խոր, լիարժեք ամառը, շորային շրջաններում խոտարույսերը շորանում են,  $25^{\circ}$ -ի հասնելիս՝ տոթ և շոգ ամառը: Այնուհետև շերմաստիճանի աստիճանական իշեցումով մինչև  $15^{\circ}$ , ավարտվում է ամառը և սկսվում է աշունը: Բարձրլեռնային շրջաններում և աշխարհագրական բարձր լայնություններում ամռանը օրական միջին շերմաստիճանը հաստատում կերպով  $15^{\circ}$ -ից լի բարձրանում, հետևաբար, կիմայական ամառ այստեղ չի նկատվում: Բայց կենսաբանական ամառ կա, քանի որ աճող բույսերն իրենց զարգացման տարեկան ոիմբով «ապրում են իրենց ամառը», այսինքն՝ ծաղկում, պտղաբերում, սերմերը հասունանում են:

Հյուսիսային կիսագնդում ամռան օրացուցային ամիսներն են հունիսը, հուլիսը և օգոստոսը, հարավային կիսագնդում՝ դեկտեմբերը, հունվարը և փետրվարը:

10. ԱՄԱՐ.ՅԻՆ ԸՆՉՅՈՒՂԱՅ—ԼԵՏԻ ՊՈԲԵԳՈՅ ՏԵ՛Ր ԸՆՉՅՈՒՂԱՅ ԿՐԿՆԱՅ:

**11. ԱՄԱՌԱՅԻՆ ՎԵԳԵՏԱՑԻԱ—ԼԵԴԻԱՅ ՎԵԳԵՏԱЦИЯ Ամառամեռնականաշ բույսերի զարգացման ֆենոլոգիական փուլ: Մառաթիային բույսերի այդ փուլը սկսվում է այն ժամանակ, երբ ընձյուղաճը հիմնականում ավարտվել է, մատղաշ տերևները լրիվ զարգացել են, տերևածածկութիւնը լրիվ վերականգնվել է: Առանձնացնում են երեք ենթափուլ: Առաջին ենթափուլը համարվում է սկսված, երբ տերևները ստանում են ամռան համար բնորոշ չափսեր ու գունավորում: Փշատերեկ բույսերի այդ ենթափուլը սկսվում է այն ժամանակ, երբ նոր ձևավորված ասեղներն իրենց գույնով և ամրությամբ համարյա չեն տարրերվում նախորդ տարիների առաջացածներից: Մառաթիային բույսերի երկրորդ ենթափուլը սկսվում է հոռաշիվերի կամ աճի շիվերի զարգացման սկզբում: Այդ ենթափուլի ընթացքում առաջացած ընձյուղների միջանգույցներն ավելի երկար են, քան դարնանային ընձյուղներին: Երրորդ ենթափուլը սկսվում է, երբ ընձյուղների ու շիվերի վրա լրիվ ավարտվում է նորագոյացումների և նոր տերևների առաջացումը: Միաժամանակ ձևավորվում են կողային ու գագաթնային բողբոջները: Չորային պայմաններում հաճախ կարճատես ամառային վեգետացիան աստիճանաբար դադարում է: Սկսվում է ամառանադարը:**

**12. ԱՄԱՌԱՅԻՆ ՊՈԿՈՅ Օդի բարձր չերմաստիճանի և խոնավության պակասի պայմաններում ամռանը խոտարույսերի վերգետնյա օրգանների շրացում կամ վեգետացիայի խիստ թուլացում՝ կենսագոյւթունը հիմնականում ստորգետնյա օրգանների (սոխուկներ, պալարներ, կոճղարմատներ) վերականգնման բողբոջներում պահպանելով:**

**13. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍԵԶՈՆՆԵՐԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ—ԻՆԴԻՎԻ-  
ԴԱՅԱԼԻՆԱՅ ՍԵԶՈՆՆԱՅ ԻԶՄԵՆԿԻՎՈՍՏԵ Ինտեգրալ մեթոդով  
ֆենոլոգիական դիտումների ընթացքում կատարվող տարրեր հաշվարկ-  
ների պայմանական միավորի (ծառ, թուփ, ցողուն, որոշակի չափսի  
փորձադաշտ) սեղոնային փոփոխականությունը: Բնութագրում է որոշա-  
կի վայրի էկոլոգիական համասեռ հատվածի (կենսաերկրացենոզ, ֆա-  
ցիա) ներքին ֆենոլոգիական տարրերությունները: Այն ոչ այնքան միջա-  
վայրի պայմանների, որքան հաշվարկի միավորների կենսաբանական ա-  
ռանձնահատկությունների արդյունք է:**

**14. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՖԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ—ԻՆԴԻ-  
ՎԻԴԱՅԱԼԻՆԱՅ ՖԵՆՈԼՈԳԻԿԵՍԿԱՅ ԻԶՄԵՆԿԻՎՈՍՏԵ ՏԵ՛Ր ԱՆ-  
ՀԱՏԱԿԱՆ ՍԵԶՈՆՆԵՐԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:**

**15. ԱՆՈՄԱԼԻԱ—ԱՀՈՄԱԼԻԱ ՏԵ՛Ր ԿԱՐԳԱՇԵՂՈՒՄ:**

**16. ԱՆՍԱՌԱՄՄԱՆԻՔ ԺԱՄԱՆԱԿԱՄԻԶՈՅ—ԵՑՄՈՐԶՈՒՅԻ ՊԵ-  
ՐԻՈԴ Դարնան վերջին և աշնան առաջին ցրտահարությունների ժամ-  
կետների միջև ընկած ժամանակահատվածը: Կարեոր նշանակություն ունի  
գյուղատնտեսական կլիմայագիտությունում, քանի որ կանխորշում է տըվ-  
յալ վայրում այս կամ այն բույսի մշակման հնարավորությունը:**

17. ԱՆՏԱՌԱՅԵՆՈԼՈԳԻԱ.—ЛЕСНАЯ ФЕНОЛОГИЯ Ֆենոլոգիայի ձյուղ, որն զբաղվում է անտառների ֆենոլոգիական հետազոտմամբ: Նպատակն է՝ ուսումնասիրել կլիմայական գործոնների ազդեցությունը անտառային բույսերի սեղոնային զարգացման վրա, հայտնաբերել օրինաշափի կապեր ֆենոլոգիական երևույթների և անտառաշտեսական աշխատանքների միջև: Ուսումնասիրում է նաև գերբուտանիկական տարրեր գոտիների, լեռնային անտառների ուղղաձիգ գոտիների ծառաթփային բույսերի, անտառների խոտածածկույթի, անտառային վնասատուների ֆենոլոգիական զարգացումը և այլն:

18. ԱՆՈՒՐՎԱԿԻ ՖԵՆՈԼՈԳԻԱ.ԱՆԱՑՈՒՅՑ—ԿՕՍՎԵՆՆԻ ՖԵՆՈԻՆ-  
ԴԻԿԱՏՈՐ Ֆենոլոգիական նշանացուց, որի կազը նշանացուցվող երե-  
վույթի հետ ուղղակի պատճառական չէ, այլ որոշվում է երրորդ գոր-  
ծոնով կամ գործոնների խմբով: Օրինակ, թիւնու և արոսենու ծաղկումը  
նղենու և սոճու փոշկթափի անուղղակի նշանացուցը է:

19. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՑԱՆՔՄԵՐԻ ՄԵԹՈԴ—МЕТОД ГЕОГРАФИ-  
ЧЕСКИХ ПОСЕВОВ Ֆենոաշխարհագրական հետազոտությունների մե-  
թոդ, որի միջոցով ուսումնասիրվում է ծագումնաբանորեն համասեր բույ-  
սերի կենսագործունեությունը՝ տարրեր աշխարհագրական պայմաններում:

20. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՖԵՆՈԼՈԳԻԱ.—ГЕОГРАФИЧЕСКАЯ ФЕ-  
НОЛОГИЯ Ֆենոլոգիական հետազոտությունների ուղղություն, որն զբաղ-  
վում է բույսերի սեղոնային զարգացման վրա ֆիզիկաշխարհագրական  
և անձնահատկությունների՝ լեռնալանչների ու հովտների ձևաբանության  
(մորֆոլոգիայի) և այլնի ազդեցության ուսումնասիրմամբ: Ֆենոլոգիայի  
այս ուղղության ամենակարևոր հարցերից մեկը՝ ըստ բարձրության բույ-  
սերի սեղոնային զարգացման փոփոխման ուսումնասիրումն է:

21. ԱՇԽԱՐՀԱՑԻՆ ԵՐԱՄԱՀԱՎԱՐ.Օ—ОСЕННИЙ СБОР В СТАН-  
ДИРОВ ՀՎԱԴ թաղումներ (սերմնագուավ, սարյակ, ծիծենակ, ջրածիծառ,  
և այլն) տաք երկրներ շվելուց առաջ երամներ կազմելու սեղոնային  
երեւյթ:

22. ԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՄԱԶԱԲՈԽՈՒՄ—ОСЕННЯЯ ЛИТЬКА Շրջակա  
միջավայրի փոփոխությանը կենդանիների հարմարվելու երեւյթ, երբ  
մաշված կամ եղանացած մազածածկը կամ մաշկը փոխարինվում է  
նորով: Մազափոխման վրա էական ազդեցություն ունին սնուցու-  
մը և արտաքին մի շարք գործոններ (չերմություն, լույս): Թոշունների  
և կաթնասունների համար հատկապես կարեւոր նշանակություն ունի օր-  
վա լուսային սեժմի փոփոխությունը:

23. ԱՇԽԱՐՀԱՑԻՆ ԶՎԻ ԱՎԱՐՏ—КОНЕЦ ОСЕННЕГО ОТЛЕТА ԶՎՈՂ  
թոշունների կյանքի ամենամյա երեւյթ: Այն օրը, որից հետո երկնա-  
կամարում որոշակի թոշնատեսակի շվել նոր երամ այլևս չի դիտվում:

24. ԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՎԵԳԵՏԱՑԻԱ.ԱՆԱՑՈՒՅՑ—ОСЕННЯЯ ВЕГЕТАЦИЯ Տա-  
փաստանային, կիսաանապատային և սավանային ամառձեռնականաշ խո-

բարույսերի գենովուլ Սկսվում է աշնանային տերևակալման փուլից հետո և ընդհատվում է սառնամանիքները սկսվելով կամ հաստատում ձյունածածկույթի առաջացմանը:

25. ԱՇԽԱՆԱՅԻՆ ՏԵՐԵՎԱԾԱՅԱՅՈՒՄ—ՕՍԵՆԻ ԼИСТООБՐԱԶՈՎԱԿԻ Ամառային կիսադաղար ոնեցող ծառաթիքերի վերած: Արտահայտվում է նյուզերի վրա նոր տերևների և ընձյուղների աճով (աշնանային տերևակալում):

26. ԱՇԽԱՆԱՅԻՆ ՏԵՐԵՎԱԾԱՅԱՅՈՒՄ—ՕՍԵՆԻ ՕՊԱԴԵՆԻ ԼԻСՏԵԲ Տե՛ս ՏերեվակաթԱՓ:

27. ԱՇԽԱՆԱՅԱՅԱՆՆԵՐԻ ՎԵԳԵՏԱՑԻ ՎԵՐՄԱՆՈՒՄ—ՅՈՒՆՈՎՈՎԼԵՒՆԻ ՎԵՐԵՏԱԼՎԻ ՕՅԱՄԵՐԻ Աշնանացան մշակովի բույսերի դարգացման ֆենոլոգիական փուլ: Սկսվում է այն օրը, երբ նկատվում է վերաճանման սկիզբը՝ թարմ կանաչի երևալը: Դեռ չբացված, խրծանման տերեկիները սկսում են երկարել, իրենց ստորին մասում մերկացնելով թարմ կանաչ հյուսվածքը: Վեգետացիայի վերսկսումը նշվում է դիտադաշտի շորս տարրեր տեղերում դրա նշանները երևալու դեպքում: Այդ նշանները սովորաբար նկատվում են, երբ ձյունածածկույթի վերանայուց հետո օդի առավելագույն չերմաստիճանը  $5^{\circ}$ -ից բարձրանում է:

28. ԱՇԽԱՅԻՆ—ՕՍԵՆԻ Երկրագնդի մակերեսույթի վրա արեգակնային էներգիայի նվազման շրջան: Տարվա ժամանակահատված, որը հյուսիսային կիսագնդում տևում է աշնանային գիշերահավասարից մինչև ձմեռային արեգադարձը: Կիմայական աշունը սկսվում է օդի չերմաստիճանը  $15^{\circ}$ -ից հաստատում իշնելու օրվանից և ավարտվում՝  $0^{\circ}$ -ի հասնելու օրը: Հյուսիսային կիսագնդում քաղաքացիական օրացույցի ընդունված աշնանային ամիսներն են սեպտեմբերը, հոկտեմբերը և նոյեմբերը, հարավային կիսագնդում՝ մարտը, ապրիլը, մայիսը:

29. ԱՋՔԱԾԱՓԱԼԱՆ ԴԻՑՈՒՄ—ՅԻՑՅԱԼՅԻՆ ՀԱՅՈՒՄ ԱԲԼՈՒԴԵՆԻ Արոշ տարածությունից բուսական համակեցության, տնկարկների կամ դիտադաշտի ֆենոլոգիական դիտումներ, երբ սեպտեմբերին փոփոխությունները գրանցվում են ըստ դիտադաշտի գունային փոփոխման:

30. ԱՌԱՆՁՆՅԱԿ—ՕՍՈԵԲ Տարածականորեն ուրիշներից առանձնացած, սեփական արմատային համակարք ոնեցող վերերկրյա ընձյուղ կամ թուփ, կենդանական աշխարհի որևէ տեսակի ներկայացուցիչ:

31. «ԱՌԱՅԱՅՈՒՐ»—«ՊԵՐԵDOBՈՎԻԿ» Այդպես են կոչվել չերմաստիճանների սովորականից ավելի փոքր գումարի առկայությամբ որոշ տարիներին վաղ ծաղկած բույսերը: Սովորաբար այդ երկույթը դիտվում է այն ժամանակ, երբ առանձին բույսերի ծաղկմանը պատրաստ բողբոշները ձմեռում են ձյան տակ: Հնացած տերմին է: Այն առաջարկել է Ա. Ա. Պոգենպոլը:

32\*. ԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՆԱՅԱՅՈՒՄ—ՊԵՐՎԱՅ ԾНЕԳ ՕՍԵՆԻ Աշխանային օրը, երբ նկատվում են ձյան առաջին փաթիլները՝ անկախ այն բանից, առաջանում է ձյունածածկույթ, թե՝ ոչ:

33. ԱՌԱՋԻՆ ԶՈՒՅԴ ՏԵՐԵՎՆԵՐ—ПЕРВАЯ ПАРА ЛИСТЬЕВ Խո-  
տաբույսերի առաջին և երկրորդ տերեների միաժամանակ բացման ֆենո-  
լոգիական փուլ: Նշվում է այն բույսերի համար, որոնց առաջին զույգ  
տերեկը հայտնվում է անմիջապես, իսկ հաջողները՝ հերթականորեն կամ  
զույգ-զույգ (օրինակ, լորի):

34. ԱՌԱՋԻՆ ՄԻԼԵՐԻ ԵՐԵՎԱՆԸ—ПОЯВЛЕНИЕ ПЕРВЫХ ВСХО-  
ДОВ Խոտաբույսերի և գյուղատնտեսական կուլտուրաների գարնանային  
ֆենոլոգիական փուլ: Նշվում է այն օրը, երեսմ է դիտարկվող բույ-  
սի առաջին խկական տերեկը, իսկ երկշաբիլավոր բույսերի շարիները  
բացվում են:

35. ԱՌԱՋԻՆ ՀԱՅՈՒՏՆԵՐԸ ԴԱՇՏԵՐՈՒՄ—ПОЯВЛЕНИЕ ПЕРВЫХ  
ПРОТАЛИН В ПОЛЕ Դաշտի հարթ տեղերում վաղ գարնանը առա-  
ջին անգամ երեսմ են ձյունից աղատված հողակորներ: Հարավահա-  
յաց լանջերում այդ երկույթը 5—6 օր շուտ է նկատվում, բայ հարթա-  
վայրում, արեւլյան և արեմտյան լանջերում: Հյուսիսահայաց լանջերում,  
ընդհակառակը, նույնքան օրով ուշ է նկատվում:

36. ԱՌԱՋԻՆ ՀՅՈՒՆԱՄԱՍԿՈՒՅԹ—ПЕРВЫЙ СНЕЖНЫЙ ПОК-  
РОВ Այն օրը, երբ ձյան տեղումից հետո, առաջին անգամ առաջանում է  
ձյունածածկույթ: Ի տարրերություն հաստատում ձյունածածկույթի, հա-  
շորդ օրերին առաջին ձյունածածկույթը կարող է վերանալ:

37. ԱՌԱՋԻՆ ՏԵՐԵՎԿ—ПЕРВЫЙ ЛИСТ ԵՐԿՇԱԲԻԼԱՎՈՐՆԵՐԻ զար-  
գացման ֆենոլոգիական փուլ, երբ երկու առաջին շարիլատերեներից  
հետո երեսմ է առաջին խկական տերեկը:

38. ԱՌԱՎԵԼԱՎՈՒՅՆ ԶԵՐՄԱՍԻՃԱՆ—МАКСИМАЛЬНАЯ ТЕМ-  
ПЕРАТУРА Որոշակի վայրում՝ օրվա, տասնօրյակի, ամսվա, տարվա,  
կամ բազմամյա նույն ժամկետների ընթացքում օդի, հողի, ջրի միջին  
կամ բացարձակ ամենաբարձր ջերմաստիճանները:

39. ԱՌՔԻ ՍԿԻՁՔ—НАЧАЛО ВЗЯТКА Մեղուների կյանքի ամեն-  
ամյա երեսույթ: Գարնան այն օրը, երբ մեղուները առաջին անգամ փե-  
թակ են վերադառնում ծաղկափոշով և նեկտարով ծանրաբեռնված:

40. ԱՄԻՄԵԼՅԱՑԻՈՆ ԺԱՄԱՆԱԿԱՄՄՈՅՑ—АССИМИЛЯЦИОННЫЙ  
ПЕРИОД ՏԵ՛ս ՅՈՒՐԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄՄՈՅՑ:

41. ԱՍՏԻՃԱՆԱՓՈԽԵՅԻՆ ՎԵՐԱԽՈՌԻՑՈՒԹՅՈՒՆ—ГРАДИЕНТНЫЙ  
АНАЛИЗ Աշխարհագրական լայնության, երկայնության ու տեղի բարձ-  
րության միավոր տարածության վրա բույսերի և կենդանիների զար-  
գացման, բնական այլ երկույթների ֆենոլոգիական փուլերի ժամկետների  
փոփոխման հաշվարկում:

42. ԱՐԱԳ ՄԱՂԱՊ, ՅՈՒՅՆԵՐ—БЫСТРОЦВЕТУЩИЕ РАСТЕ-  
НИЯ Բույսեր, որոնց ծաղկումը տևում է մի քանի օրից մինչև 1—2  
շաբաթ (օրինակ՝ թեղի):

43. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԶԵՐՄԱՍԻՃԱՆ—ЭФФЕКТИВНАЯ ТЕМПЕ-

РАТУРА Բարեխառն կլիմայի պայմաններում օրվա միջին չերմաստիճանի և արդյունավետ չերմաստիճանի հաշվարկման համար կենսաբանական գրո համարվող  $+5^{\circ}$ -ի տարրերությունը: Օրինակ, կոնկրետ որևէ օր միջին չերմաստիճանը եղել է  $22^{\circ}$ : Նշանակում է այդ օրվա արդյունավետ չերմաստիճանը  $17^{\circ}$  է ( $22 - 5$ ):

44. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՄ—СҮММА ԹՓ-ՖԷԿՏԻՎՆԻ ՏԵՄՊԵՐԱՏՈՒՐ Բույսերի զարգացման արագության և օդի չերմաստիճանի կազմը: Բարեխառն գոտու բույսերի համար այն արտահայտվում է  $A = n(t - 5^{\circ})$  բանաձեռվ, որտեղ  $A$ -ն արդյունավետ չերմաստիճանների գումարն է,  $n$ -ը՝ տվյալ ժամանակամիջոցի օրերի թիվը,  $t$ -ն՝ այդ ժամանակամիջոցի միջին չերմաստիճանը, իսկ  $5^{\circ}$ -ը՝ զարգացման կենսաբանական գրոն է: Ավելի ճիշտ հաշվարկի համար տվյալ ժամանակամիջոցի յուրաքանչյուր օրվա միջին չերմաստիճանի և  $5^{\circ}$ -ի տարրերությունները գումարվում են: Յուրաքանչյուր բույսի համար հաշվարկված արդյունավետ չերմաստիճանների միջին գումարը սովորաբար անփոփոխ է (օրինակ, աշնանացան ցորենի մոմային հասունացման արդյունավետ չերմաստիճանների միջին գումարը Արարատյան դաշտում  $1825^{\circ}$  է): Դրա շնորհիվ վերը նշված հավասարությունը հնարավոր է ձևափոխել հետևյալ կերպ.  $\frac{A}{t - 5^{\circ}}$ : Դա նշանակում է, որ եթե հայտնի է որոշակի բույսի զարգացման որևէ միջփուլային ժամանակամիջոցի արդյունավետ չերմաստիճանների հաստատում մեծությունը և այդ ժամանակամիջոցի միջին չերմաստիճանը, ապա կարելի է որոշել տվյալ չերմության պայմաններում այդ ժամանակամիջոցի տևողությունը:

45. ԱՐՄԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԵՆՈԼՈԳИЯ ԿՈՐ-ՆԵՎՈЙ СИСТЕМЫ Ֆենոլոգիայի ճյուղ, որն զրադվում է բույսերի արմատային համակարգի տարեկան աճի լիաշրջանների ուսումնասիրմամբ:

46. ԱՐՏԱՐԿՈՒՄ—ԵԿՏՐԱՊՈԼՅԱЦԻՅԱ Ֆենոլոգիական երևութիւնի մասի վրա կատարված դիտումների շնորհիվ արված եղբակացությունները նրա մյուս մասի, այլ տարածքի կամ գալիք ժամանակի վրա տարածելու մեթոդ: Տարածության մեջ, պարզագույն դեպքում, արտարկումը սերտորեն կապված է ընտրովի մեթոդի հետ: Այսպես, 90 տոկոսանոց ճիշտ ընտրության պայմաններում անվիճելի է, որ դրա միջին արդյունքը մոտ պետք է լինի ամբողջից ստացվող միջին արդյունքին: Արտարկումը ֆենոլոգիայում լայնորեն կիրառվող մեթոդ է:

47. ԱՐՏԱՐԿԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ—ВНЕШНЯЯ СРЕДА Բույսերին, կենդադանիներին, մարդուն շրջապատող ամբողջ անօրգանական բնությունը (լույս, չերմություն, ջուր, հողի մայր ապարներ, տեղանքի ընդհանուր կլիմա):

48. ԱՐԵՎԱՐԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԽ—ГЕЛИОТЕРМИЧЕСКАЯ КОНСТАНТА Չերմաստիճանի և ճառագայթման գործառությունը ճառագայթման դիտումների տվյալներն անբավարար լինելու դեպքում դրա փո-

խարնն կարելի է օգտագործել ցերեկվա տեղությունը: Հնացած տերմին է: Այն առաջարկել է Հ. Գևալինը:

49. Ա.ՐԵՎԱ.ՓԱ.ՅԼ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ—ПРОДОЛЖИТЕЛЬНОСТЬ СОЛНЕЧНОГО СИЯНИЯ Ժամանակահատված (օրվա, ամսվա, տարվա), երբ տվյալ վայրում արեք երեսմ է հորիզոնի վրա և ծածկված չէ խիտ ամպերով, մառախուղով, մշուշով և այլն: Արտահայտվում է ժամերով կամ տվյալ ժամանակահատվածի ցերեկվա տեղության համեմատությամբ՝ տոկոսներով:

50\*. Ա.ՓԱ.ՍԱ.ՌՈՒՅՑԻ Ա.ՌԱ.ԶԱ.ՑՈՒՄ—ОБРАЗОВАНИЕ ЗАБЕРЕГОВ ԳԵՏԵՐԻ և ՉՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԱՓԵՐԻՆ ՊԻՄՎՈՂ ԵՐԵԿԵՎՅ: Այն օրը, երբ գետի, լճի կամ ջրամբարի ափերի առանձին հատվածներում նկատվում է կպած սառուցի բարակ շերտ:

## Բ

51. ԲԱԶՄԱՄՅԱ ԲՈՒՅՍ—МНОГОЛЕТНЕЕ РАСТЕНИЕ ԵՐԿՈՒ ՄԱՐՈՎԵ/ ավելի կյանք ունեցող բույս:

52. ԲԱԶՄԱՅՄԱՆ ՓՈԽԵՐԻ ՎԻՃՐՅԱՆ—ЦИКЛ ГЕНЕРАТИВНЫХ ФАЗ ՏԵ՛Վ ՎԵՐԱՐՍՏԱԴՐՄԱՆ ՕՐԴԱՆՆԵՐԻ ԶԱՐԴԱՅՄԱՆ ՅԵՆՈՂԴԻԱԿԱՆ ՓՈԽԵՐ:

53. ԲԱԺՆԵՀԱՏ—ՄԵՋԱ Յենոլոգիական դիտումների ինտերալ մեթոդի հաշվարկային միավոր հանդիսացող բույսի զարգացման նախապես որոշված պահը: Բաժնեհատի համեմատությամբ հետազոտման օրենկություրու հաշվարկային միավորները ստորարածանվում են երկու խմբի: Բույսեր, որոնք իրենց սեղոնային զարգացմամբ դեռ չեն հասել այդ պահին (նշանակվում է 0 կամ —) և բույսեր, որոնք հասել կամ անցել են այդ պահը (նշանակվում է 1 կամ +): Օրինակ, եթե որպես բաժնեհատ ընդունված է ծաղկման ավարտը, ապա առաջին խմբում կլինեն կոկոնակալման, ծաղկման և զանգվածային ծաղկման վիճակում գտնվող բույր առանձնյակները, իսկ երկրորդ խմբում՝ ոչ միայն ծաղկումն ավարտող, այլև խակ կամ հասուն պտուղներով բույսերը: Որպես բաժնեհատ կարող է ծառայել բույսի սեղոնային զարգացման ցանկացած պահը, որը բավական ցայտուն և հարմար է ֆենոլոգիական դիտումների համար: Տերմինն առաջարկել է վ. Ա. Բատմանովը:

54. ԲԱՅԱՐՁԱԿ Ա.ՌԱ.ՎԵՆ.ԳՈՒՅՑՆ—АБСОЛЮТНЫЙ МАКСИМУМ Ժամանակի ընթացքում փոփոխվող օդերեսութաբանական որևէ տարրի (օդի ջերմաստիճան, մթնոլորտային ճնշում և այլն) բազմաթիվ տարիների ընթացքում նկատված ամենամեծ արժեքը տվյալ կետում, մարզում, երեսում կամ ամբողջ երկրագնդում:

55. ԲԱՅԱՐՁԱԿ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆ—АБСОЛЮТНАЯ ВЛАЖНОСТЬ Օդում ջրային գոլորշու քանակը՝ արտահայտված  $\eta / \text{մ}^3\text{-ով}$ :

56. ԲԱՅԱՐՁԱԿ ՆՎԱԶԱԳՈՒՅՑՆ—АБСОЛЮТНЫЙ МИНИМУМ Ժամանակի ընթացքում փոփոխվող օդերեսութաբանական որևէ տարրի (օդի

չերմաստիճան, մթնոլորտավին ճնշում և այլն) բաղմաթիվ տարիների ընթացքում նկատված ամենափոքր արժեքը տվյալ կետում, մարզում, երկրում կամ ամրող երկրագնդում:

57. ԲԱԼՈԿԻՒԼԳ—ԵԼՈԿԲԱԼԵԴ Ֆենոլոգիական երկույթների ծավալային պատկերման եղանակ: Հեշտացնում է մեծ տարածքի ֆենոլոգիական տարրերությունների պատկերումը:

58. ԲՆԱԿԱՆ ՍՆԹԱԾՈՂՈՆ—ЕСТЕСТВЕННЫЙ ПОДСЕЗОН Բնական սեզոնի խոշոր բաժնեմաս (գարնանամուտ, լիակատար կամ ձաղկուն գարուն, ամառնամուտ, ոսկի աշուն, ձմեռնամուտ և այլն): Համանման է քաղաքացիական օրացույցի ամիսներին: Բնական ենթասեղոնները իրարից տարրերում են լանջավտի տեսույթի բնույթով: Բայց հերթագյուղ ենթասեղոնների միջև տարրերություններն ավելի էական են, քան բնական սեղոնների միջեւ: Բոլոր բնական ենթասեղոններին հատուկ է համապատասխան սեղոննին բնորոշ պրոցեսների ընդհանուր ուղղվածությունը: Դրա հետ միասին յուրաքանչյուր ենթասեղոննին հատուկ են ինչպես բնական պրոցեսների զարգացման, այնպես էլ տեսույթների փոփոխման միայն իրեն բնորոշ գծերը: Բնական ենթասեղոնները առանձնացվում են ֆենոլոգիական նշանացույցներով: Տարրեր վայրերում բնական ենթասեղոնների թիվը, դրանց անվանումներն ու առանձնացման համար հիմք ծառայող ֆենոլոգիական նշանացույցները տարրեր են: Բնական ենթասեղոնը այլ կերպ անվանում են նաև սեղոնի բնթացարշան (Ա. Պ. Շեննիկով), սեղոնի փուլ (Ն. Ն. Գալախով) և այլն:

59. ԲՆԱԿԱՆ ՍՆՁՈՆ—ЕСТЕСТВЕННЫЙ СЕЗОН Տարվա ժամանակահատված, որն ունի որոշակի տևողություն և յուրա սեղոններից տարրերվում է իր ուրույն եղանակային պայմաններով (ջերմաստիճանի և տեղումների ուժիմով), կենդանի և անկենդան բնույթյան երկույթների ու դաշտային աշխատանքների կոնվլեքսով, շրջապատի բնույթյան բնորոշ տեսքով՝ տեսույթով): Տարբխառն գոտիներում ընդունված հիմնական սեղոններն են ձմեռը, գարունը, ամառը և աշունը: Յուրաքանչյուր բնական սեղոն կարող է ստորաբաժանվել ավելի փոքր հատվածների՝ բնական ենթասեղոնների: Բնական սեղոնները, ի տարրերություն աստղաբաշխական ու քաղաքացիական օրացույցի սեղոնների, տարրեր աշխարհագրական շրջաններում մկանում են տարածամանակ և ընթանում են տարրեր արագությամբ: Փոփոխական են նաև միենույն աշխարհագրական կետում տարրեր տարիների բնական սեղոնների սկզբի և ավարտի օրացույցին ժամկետները: Օրինակ, ձմեռը կամ գարունը մեկ տարի շուտ է զամփ, մյուս տարի՝ ուշ, դրանք ունենում են տարրեր տևողություններ և այլն: Բնական սեղոնների սահմանները, բնական ենթասեղոնների նման, որոշվում են նշանացույց սեղոնային երկույթներով:

60. ԲՆԱԿԱՆՈՆ ԳԱՅՑՄԱՆՆԵՐ—НОРМАЛЬНЫЕ УСЛОВИЯ ԲՆԱԿԱՆԱՄԱՍԻՐՎՈՂ բուսաբանակի աճման համար բնորոշ պայմաններ: Օրի-



նակ, եթե լաստենու անման բնորոշ վայրերը գետերի, լճերի և ճահիճների ափերն են, ապա ֆեռոզիական դիտումների համար լաստենիները ընտրվում են հենց արդարիստ վայրերում, քանի որ դրանք բնականոն պայմաններ են լաստենու համար:

61. ԲՆՈՐՈՇ ԲՈՒՅՍԵՐ—ТИПИЧНЫЕ РАСТЕНИЯ Վեգետացիալի վեց շրջանի բույսեր, որոնք բարձրությամբ, տերևների թվով և ընդհանուր վիճակով բնորոշ են դիտադաշտի բույսերի մեծամասնության համար: Վեգետացիալի ավելի ուշ շրջանները բնորոշում են ճյուղավորման (թփակալման) աստիճանը, ծաղկաբույլերի, հասկերի (հուրանների) շափը և բույսերի ընդհանուր վիճակը:

62. ԲՆՈՐՈՇ ՖԵՆՈԴԱՏԱ ՖԵՆՈԴԱՏԱ ՖԵՆՈԴԱ լոգիական քարտեղի վրա այնպիսի ամսաթիվ, որը բնորոշում է ոչ թե առանձին դիտակետը, այլ որոշակի տարածքային կոմպեքտը: Քանիակական ցուցանիշների ընդհանրացման և բնորոշ ֆենոդամսաթիվեր ստանալու համար ամենից հարժար են ֆիզիկաշխարհագրական միավորները (ֆացիա, բնատեղամաս, լանդշաֆտ):

63. ԲՆՈՒԹՅԱՆ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԸՆԹԱՑՔԻ ԱՐՏԱՇԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ—ԷԿ-ՅՈՐԴԵՆՆԵՐ ՍԵԶՈՆԻ ՀԱՆՈՒՄԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԻ ՊՐԻՐՈԴԵՐ Բնության սեզոնային ընթացքի ժամկետների վրա ազդող արտաքին միջավայրի գործոններ: Հիմնական գործոնը արեգակնային ճառագայթումն է: Էական ազդեցությունը ունեն նաև ջերմության ու խոնավության ուժիմները, ինչպես նաև կենսածին ու մարդածին որոշ գործոններ:

64. ԲՆՈՒԹՅԱՆ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԸՆԹԱՑՔԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ—ՖԱԿТОՐԵՐ ՍԵԶՈՆԻ ՀԱՆՈՒՄԱԿԱՆ ՊՐԻՐՈԴԵՐ Բնության սեզոնային երեսությունների սկսման ժամկետների վրա էական կամ նկատելի ազդեցությունը ունեցող գործոններ: Տարբերում են արտածին ու ներծին գործոններ:

65. ԲՆՈՒԹՅԱՆ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԵՐՄԽԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ—ԷՆ-ԴՈԳԵՆՆԵՐ ՍԵԶՈՆԻ ՀԱՆՈՒՄԱԿԱՆ ՊՐԻՐՈԴԵՐ Բնության սեզոնային ընթացքի ժամկետների վրա ազդող գործոններ, որոնք պայմանավորված են որոշակի օրգանիզմի ժառանգական, ներծին հատկություններով:

66. ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ—ԼԵՏՈՓԻՍ ՊՐԻՐՈԴԵՐ Պետական արգելոցների կենդանի և անկենդան բնության մեջ տեղի ունեցող քնական պրոցեսների ընթացքի վերաբերյալ լիաստաթղթերի ծողովածու: Կազմվում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ: Այդ տարեգրությունների կազմման համար օգտագործվում են ամենամյա հաշվետվությունները: Բնության օրագրի տարատեսակն է:


67. ԲՆՈՒԹՅԱՆ ՕՐԱԳՐԻՐ—ДНЕВНИК ՊՐԻՐՈԴԵՐ Որոշակի վայրի բնության սեզոնային երեսությների մասին ինֆորմացիայի հանրամատչելի ձև: Պարբերական մամուլում տպագրվող տեսություններ են զարնան, ամռան, աշնան, ավելի սակավ՝ ձմռան ընթացքի մասին:

68. ԹԵՌԻԹՅԱՆ ՕՐԱՅՈՒՅՑ—ԿԱԼԵՆԴԱՐԸ ՊՐԻՐՈԴՅԻ ՖԵՆՈՂ-  
ԳԻՒԿԱՆ ՄԵՂԵԿԱՍՈՒԻ ՄԵԽԱԿԻ: Կաղմակում է ազյուսակի ձեռվ: ՏԵՂԵԿՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԻ Է պարունակում որոշակի վայրի բնության սեղոնային երկութ-  
ՆԵՐԻ սկսման և ավարտի բազմամյա ժամկետների մասին (սովորաբար  
դասավորված օրացուցային կարգով): Տարբերում են ճյուղային և լանդ-  
շաֆտի սեղոնային ընթացքը ամբողջությամբ բնութագրող օրացուցներո  
Ճյուղային օրացուցները տեղեկություններ են պարունակում տվյալ վայ-  
րում ժողովրդական տնտեսության ճյուղերից որևէ մեկի հետ կապված  
սեղոնային երկույթների, աշխատանքների, միջոցառումների սկսման և  
ավարտի բազմամյա միջին ժամկետների մասին: ՏԵՂԵԿԱՆ լանդշաֆտը  
ամբողջությամբ բնութագրող բնության օրացուցները տեղեկություններ են  
պարունակում բնության ամենաբնորոշ և հեշտ դիտվող տեղական սեղո-  
նային երկույթների մասին՝ անկախ այն բանից, թե բնության ո՞ր մասին  
են դրանք պատկանում: Փորձը ցույց է տվել, որ նպատակահարմար  
ընտրված սեղոնային  $100-150$  երկույթները գործնական կյանքի համար  
բավարար կերպով բնորոշում են տեղական լանդշաֆտի սեղոնային զար-  
դացման ընթացքը: Բնության օրացուցները կազմվում են նույն վայրում  
միասնական մեթոդով կատարված բազմամյա ֆենոլոգիական դիտումնե-  
րի տվյալների մաթեմատիկական մշակման միջոցով:

69. ԲՈՂԲՈԶԱԿԱՅՑ—ՊԱԾՎՈՒՄ ՊՈՉԵԿ ՏԵ՛Ա ԲՈՂԲՈԶԱ-  
ԿԱՓԹՈՒՄ:

70. ԲՈՂԲՈԶԱԿԱՏՈՒՄ—ՊԱՅՎԵՐՅԱԿԱԿԱՆ ՊՈՉԵԿ ՏԵ՛Ա ԲՈՂԲՈ-  
ԶԱՓԹՈՒՄ:

71\*. ԲՈՂԲՈԶԱԿԱՏՈՒՄ—ՆԱԲՈԽԱՆԻ ՊՈՉԵԿ Մառերի և թփերի  
տարեկան զարգացման վաղ գարնանային ֆենոլոգիական փուլ: Սկսված է  
համարվում, երբ ցերեկային բարձր շերմաստիճանների ներգործության  
տակ տերեկարողությունները սկսում են աճել և մեծանալ: Զափսերի մեծաց-  
ման հետևանքով բողրոշաթեփուկները աստիճանաբար հեռանում են ի-  
րարից: Թիփուկների միջև երկում են բաց գույնի շերտիկներ, որոնք աս-  
տիճանաբար մեծանում են: Դրա հետևանքով բողրոշները նկատելիրեն  
բաց գույն են ստանում կամ մասամբ գումարվում են (որոշ բողրոշ-  
ների ձեզ էապես փոխվում է): Որոշ ժամանակ անց առանձին բուսա-  
տեսակների վրա (թմկի, լորենի և այլն) տերեկակիցներ են հայտնվում:  
Սոճագդիների (սոճի, եղինի) նոր փշատերև տրցակների՝ «մոմերի» աճ-  
ման սկիզբը վկայում է այդ բույսերի բողրոշառուման փուլը սկսվելու  
մասին: Բողրոշաթեփուկներ չունեցող բուսատեսակների համար (դժնիկ)  
այս ֆենոլոգիական փուլի սկիզբը համարվում է այն օրը, երբ կատվիկ-  
ները փիրանում են: Տարբերում են բողրոշառուման երկու հնթափուլ:  
Առաջին ենթափուլում նկատելի են ֆենոփուլի սկսման ամենաառաջին  
նշանները: Երկրորդ ենթափուլում բողրոշների մեծացումը լավ արտա-  
հայտված է և հեշտությամբ դիտվում է անգեն աշքով: Սոճագդիների հա-  
մար նշվում է, նաև երրորդ ենթափուլ. փշատերևի մեծացած տրցակը



Նկ. 1. Նովոչերկասկ քաղաքի ցուցադրական բնության օրացուցիչ մի հատված (Հեղինակ՝ ն. Վ. Պոպով):

ավելի նմանվում է Հյութալի ընձյուղի, քան` բողբոչի: Շառաթփերից միայն մերկաբողբոշ տեսակներն են (գիհի), որ բողբոշառոշման ֆինուֆուլ չունեն:

72\*. ԲՈՂԲՈՉԱՍՓԹՈՒՄ—ՐԱԾՈՒՏԱԿԻՑ ՊՈՅԵԿ Շառերի և թփերի տարեկան զարգացման վաղ գարնանային ֆենոլոգիական փուլ Մկավում է, երբ բողբոշառոշմից հետո առաջին տերևների ծայրերը (բայց ոչ տերեկակիցները) երեսմ հն բացված տերեկաթեփուկների տակից: Ունենում են բաց կարմրավուն (թխկի, կաղամախի) կամ բաց կանաչավուն գույն (կաղնի): Խեժափիճու սաղարթը այդ ժամանակ ծածկվում է հաղիկ նկատելի բաց կանաչավուն շգարշով: Թաքնված բողբոշներ ունեցող բուսատեսակների նոր հայտնված բողբոշներում նկատելի են տերեկիկների կանաչավուն սաղմեր: Եղնուու համար այդ փուլի սկսման ընորոշ նշանը մատղաշ փշատերեների տրցակը ծածկող թաղանթային գլխադիրի պատովելն է: Մերկաբողբոշ տեսակների համար դա գարնանային առաջին ֆենոփուլն է: Սերտ զասավորված ու թերզարգացած ձմեռած փշատերեների ու տերեկների տրցակները գեռես պահպանած են լինում իրենց նախկին ձևը, բայց զգալիորեն մեծացած: Բաղմացման բողբոշների ծայրի ներքին թեփուկների բացվելը այդ բողբոշների վիթման նշանն է: Միմյանցից հեռացած թեփուկների միջև այդ ժամանակ նշմարվում են կամ կենտրոնական կոկոնների գագաթները՝ դեռ շբացված բաժակաթերթիկներով, կամ խողովակածկ փաթթաթված մերձաւողային վարդակի տերեկները, որոնց հետեւ կոկոնները չեն նշմարվում (կամ տերեկիկների ծայրերը և կոկոնները միաժամանակ են նշմարվում):

73. ԲՈՂԲՈՉՋՈՒՄ—ՊՈՅԿՈՎԱՆԻ ՏԵԽ ԲՈՂԲՈՉԱԱՐԱՌՈՒՄՈՒՄ:

74. ԲՈՒՅՍԵՐԻ «ԼԱՅ»—«ՊԼԱՅ» ՐԱԾԵՆԻ Շառերի և թփերի ձմեռային հանգամեց դուրս զալը որոշող վաղ գարնանային ֆենոլոգիական փուլ: Ձրի և նրա մեջ լուծված նյութերի ակտիվ արտազատումը բույսերի ցողունից՝ դրանց վնասման դեպքում: Մկաման նշանը ծառարնի հարավահայաց մասի ծակված կեղկեց սննդահյութի կաթիլների հայտնըվելն է: Լավ է արտահայտվում կեշու, լաստենու, թխկու, խաղողի վրա: Ֆենոլոցների մի մասը այդ երեսով անվանում է հյութաշարժում:

75. ԲՈՒՅՍԵՐԻ ԶԱՐԴԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱՌՋԱՆՆԵՐ—ԾԱԴԱ ՐԱԶՎԻՏԻՅ ՐԱԾԵՆԻ Սովետական բուսաբանական գրականությունում նշանակում է միջավայրի գործոններով պայմանավորված բույսերի օնտոգենների տարրեր էտապներ: Զարեւք է շփոթել բույսերի զարգացման փուլերի հետ:


76. ԲՈՒՅՍԵՐԻ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ—ԾԻՆ-ԽՐONHOСTЬ ՐԱZVITIЯ ՐԱԾԵՆԻ Տվյալ պայմաններում տարրեր բույսերի մատեսակ երեսովների միջտ միաժամանակ սկսումը կամ միննույն տարատեսակ երեսովների մշտական համընկնումը բույսերի զարգացման ընթացքում:

77. ԲՈՒՅՍԵՐԻ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԼԱՅՇՐՋԱՆ—ԳՈДИЧНЫЙ

ЦИКЛ РАЗВИТИЯ РАСТЕНИЙ Բարձրակարգ բույսերի զարգացման տարեկան ամրող ընթացքը: Սովորաբար տարբերում են ֆենոլոգիական հետևյալ հիմնական փուլերը. ձմեռնաղադաց, բույսերի «լաց», բողբջառշուռ, բողբջափրռում, տերեարաց, ամառային վեգետացիա, տերեների աշնանային գրւափխում, տերեարափ, կոկսնակալում, ծաղկում, պտուղների և սերմերի հասունացում, պտղաթափ: Նշված ֆենոլոգիւլերից գրեթե յուրաքանչյուրը, մանրամասն ուսումնասիրելիս, սուրարածանվում է մի քանի ենթափուլերի: Առանձին բույսեր (դժնիկ, գիճի) թարգված ֆենոլոգիական փուլերից մի քանիսը լունեն:

#### 78. ԲՈՒՅՍԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԵՐԸ—ՓԱՅՏ ՌԱԶՎԻՏԻՅԱ ՌԱՏԵՆԻ ՏԵ՛Կ ՖԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈԽԵՐԸ:

79. ԲՈՒՅՍԵՐԻ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿՈՐ—ԿРИВԱՅ ՀԵՏՈՒՆՈՒԹՅՈՒՆ Առանձին բույսերի կամ ամրող պոպուլյացիայի սեղոնային փոփոխությունների պատկերման գծագիր: Հատունի հորիզոնական գծի վրա նշվում է ժամանակը (ամիսներ), իսկ ուղղահայաց գծի վրա՝ զարգացման տվյալ փուլում գտնվող բույսերի քանակը (տոկոսը): Յուրաքանչյուրը պոպուլյացիայի ֆենոլոգիական վիճակը կարելի է պատկերել միմյանց վրա տեղակրված երեք կորերով: Գծագրի ստորին մասը ցույց է տալիս տերեակալման, միջինը՝ ծաղկման, վերինը՝ պտղաբերման սեղոնային փոփոխությունը:



Նկ. 2. Գեղին ակացիայի (*Callagena arboreascens*) սեղոնային զարգացման կոր (հեղինակ՝ ի. Ա. Գրուձինակայա). 1. տերեակալման, 2. ծաղկում, 3. պտղաբերում. α—ց տարբեր սերունդներ:

#### 80. ԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍԵԶՈՆԱՅԻՆ ՓՈԽԵՐԸ—ՍԵԶՈՆНАЯ ФАЗА РАЗВИТИЯ РАСТЕНИЙ И ЖИВОТНЫХ ТЕЧЕНИЯ РАЗВИТИЯ РАСТЕНИЙ И ЖИВОТНЫХ ՏԵ՛Կ ՖԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈԽԵՐԸ:

81. ԲՈՒՅՍԵՐԻ ՖԵՆՈԼՈԳԻԱ.—ФЕНОЛОГИЯ РАСТЕНИЙ Ֆենոլոգիայի ճյուղ, որն զբաղվում է առանձին բույսերի զարգացման սեղոնային երկույթների ուսումնասիրմամբ:

82. ԲՈՒՌԵՆ ՍՊՈՐԱԹՍՓՈՒՄ—РАЗГАР СПОРОНОШЕНИЯ ԳԵտ-  
նամուշկազգիների զարգացման ֆենոլոգիական փուլ, եթե սպորանոթների  
թվի շարք մեկ երրորդից սպորները թափվում են:

83. ԲՈՒՄԱԾԱԿՈՒՅՑԻ—РАСТИТЕЛЬНЫЙ ПОКРОВ ԵՐԿՐԱԳՆԴԻ  
կամ նրա առանձին հատվածների բուսացենոգների ամբողջությունը: Կենսա-  
պլորափ կարելոր բազապրամասն է և անընդհատ փոխազդեցությամբ սեր-  
տորեն կապված է շրջակա միջավայրի հետ: Բուսածածկութիւն տարրեր  
տիպերի տեղաբաշխումը հիմնականում զոնայական բնույթ ունի և կապ-  
ված է արեգակնային ճառագայթման ու մթնոլորտային տեղումների տե-  
ղաբաշխման հետ:

84. ԲՈՒՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԵՆՈԼՈ-  
ԳԻЯ РАСТИТЕЛЬНЫХ СООБЩЕСТВ ՖԵՆՈԼՈԳԻԱԻ ճյուլ, որն  
գրազվում է բուսական համակեցությունների զարգացման սեզոնային երե-  
վույթների ուսումնասիրմամբ: Նպատակ ունի սահմանել բուսական հա-  
մակեցության ֆենոլիթմատեսակները, կազմել ֆենոլորրապատկերները,  
ծաղկման ու այլ ֆենոփուկերի կորերը և այլն:

85. ԲՈՒՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԵՆՈԼՈԳԻԱՆ ԴԻՏՈՒՄ-  
ՆԵՐ—ФИТОЦЕНОФЕНОЛОГИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ Բուսա-  
կան համակեցության տարրեր բուսատեսակների փոխադարձ կապի ու-  
սումնասիրման նպատակով կատարվող ֆենոլոգիական գիտումներ:

86. ԲՈՒՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵԶՈՆՆԵՐԻ ՏԵՍՈՒՅԹ—СЕЗОННЫЙ АС-  
ПЕКТ РАСТИТЕЛЬНОСТИ Կենսացենոգի արտարին տեսքի սեղոնա-  
յին լուրահատկությունը՝ պայմանավորված առանձին բուսատեսակների  
ֆենոլոգիական փուկերի փոփոխմամբ, հատկապես այս կամ այն բույսի  
զանգվածային ծաղկմամբ: Ունենում է բուսածծկի տվյալ ժամանակա-  
հատվածին բնորոշ գույն:

87\*. ԲՈՒՄԱԿԱՆԿՐԻՄԱ—ФИТОКЛИМАТ Բույսերի շրջակա (օրինակ, խո-  
տածածկույթի, ծառերի սաղարթի) միկրոկլիմայական պայմանները:

88\*. ԲՈՒՄԱՆՇԱԽԱՅՑՈՒՅՑ—ФИТОИНДИКАТОР Բույս կամ բուսա-  
կան համակեցություն, որն օգտագործվում է որպես միջավայրի պայ-  
մանների նշանացույց: Տես նաև ԿԵՆՍԱՆՇԱԽԱՅՑՈՒՅՑ:

89\*. ԲՈՒՄԱԶԱՓ—ФИТОМЕТР Վեգետացիոն թաղարներ, որոնց նույ-  
նատեսակ հողում աճեցված են ծագումնաբանորեն միատեսակ բույսեր: Օգտագործվում են աշխարհագրական տարրեր լայնությունների ու բարձ-  
րությունների համար համեմատելի ֆենոլոգիական տվյալներ ստանալու  
նպատակով:

90. ԲՈՒՄԱԶԱՓԵՐԻ ՄԵԹՈԴ—МЕТОД ФИТОМЕТРОВ Առանձին  
բույսերի կամ բուսական համակեցության առանձին հատվածների վրա  
արտարին գործոնների աղդեցության ֆենոլոգիական ուսումնասիրման  
մեթոդ: Հստ այդ մեթոդի, բուսաչափերը տեղադրվում են աշխարհագրա-  
կան տարրեր կետերում և դրանցում անող բույսերի սովորական ֆենոլո-  
գիական դիտումներ են կատարվում: Դա հնարավորություն է տալիս բա-

ցառել ֆենոլոգիական դիտումների արդյունքների վրա բույսերի ծագում-նաբանական և այլ տարրերությունների ազդեցությունը ու ստանալ միայն արտաքին գործոնների ազդեցությամբ պայմանավորված համեմատելի տվյալներ:

91. ԲՈՒՍԱՅԻԹՄԱՏԵՍԱԿՆ—ՖԻТОՐԻԴՄՈՏԻՊ ՏԵ՛Ս ՖԵՆՈԼՈՒԹՄԱ-ՏԵՍԱԿՆ:

92. ԲՈՒՍԱՅԵՆՈԶՆԵՐԻ ՍԵՋՈՆԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ—СЕЗОН-НЫЕ ИЗМЕНЕНИЯ ФИТОЦЕНОЗОВ Բուսական համակեցության փոփոխություններ, որոնք տեղի են ունենում բույսերի աճի և զարգացման, վեգետացիալի ընթացքում և կապված են կլիմայական փոփոխությունների հետ: Դրանց թվում են, մասնավորապես, բուսական համակեցության տարրեր շերտերում բույսերի զարգացման վիճակի փոփոխությունները, համակեցության տեսույթների փոփոխությունները և այլն:

93. ԲՈՒՍԱՅԵՆՈԶՆԵՐԻ ՖԵՆՈԼՈԳԻԱ—ФИТОЦЕНО-ЗОВ ՏԵ՛Ս ԲՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԵՆՈԼՈԳԻԱ:

94. ԲՈՒՍԱՅԵՆՈՂՈԳԻԱԿԱՆ ՈԵՖԻՄ—ФИТОФЕНОЛОГИЧЕСКИЙ РЕЖИМ Որոշակի պշարհագրական միավորներում (ֆացիա, բնատեղամաս, լանդշաֆտ) // բույսերի որոշակի խմբերի սեղոնային զարգացման փոխադարձ կապը:

95. ԲՈՒՍԱՅԵՆՈՂՈԳԻԱԿԱՆ ՓՈՒ.—ФИТОФЕНОЛОГИЧЕСКАЯ ФАЗА ՏԵ՛Ս ՖԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈՒ:

96. ԲՈՒՍԱՅԵՆՈՂՈԳԻԱԿԱՆ ՔԱՐՏԵՁՆԵՐ—ФИТОФЕНОЛОГИЧЕС-КИЕ КАРТЫ Բույսերի զարգացման փուկերի ժամկետների տարածական պատկերը արտացոլող քարտեզներ: Հաճախ բուսաֆենոլոգիական քարտեզներն անվանում ին ֆենոլոգիական: Սակայն, վերջիններս ավելի լայն իմաստ են արտահայտում, քանի որ ընդգրկում են ոչ միայն բուսաֆենոլոգիական, այլև բնական կոմպլեքսի տարրեր բաղադրամասերի սեղոնային ոիթմը արսացոլող ուրիշ քարտեզներ:

Հստ առանձին բուսատեսակների, բուսաձեերի և բուսականության զարգացման առանձնացվում են բուսաֆենոլոգիական քարտեզների երկու խումբ՝ ֆլորաֆենոլոգիական և ցենոֆենոլոգիական:

Բուսաֆենոլոգիական քարտեզները լինում են խոշորամասշտար, միջին մասշտարի և փորբամասշտար: Խոշորամասշտար քարտեզները ( $1:200000$  և ավելի խոշոր) արտահայտում են նեղ, տեղական բնույթի մասնակի օրինաչափություններ: Ստեղծվում են հիմնականում դաշտային հանուլթի հիման վրա: Միջին մասշտարի քարտեզները ( $1:200000$ -ից  $1:1000000$ ) արտացոլում են առանձին սեղոնների բուսաֆենոլոգիական և ժիմանքի փաստացի տեղաբաշխման պատկերը: Կազմվում են մի շարք մեթոդներով (Ծնեկի, Ուկիկի, Կուրպելովայի և այլն): Փորբամասշտար քարտեզները ( $1:1000000$  և ավելի փոքր) պատկերում են մինչորդի ընդհանուր շրջանառությամբ, աշխարհագրական զոտիների, մայրցամաքների

և օվկիանոսների ազդեցության տարբերությամբ պայմանավորված օրինաշափությունները: Կազմվում են նույն մեթոդներով, ինչ նույն մասշտարի ֆենոլոգիական քարտեզները:

Հստ նշանակության բուսաֆենոլոգիական քարտեզները լինում են՝ գիտատեղեկատու, գործնատնտեսական և ուսումնական: Գիտատեղեկատու քարտեզները նախատեսված են դիտահետազոտական աշխատանքների համար: Հիմնականում լինում են՝ խոշոր և միջին մասշտարի: Գործնատնտեսական քարտեզները գյուղատնտեսության, անտառային և որսորդական տնտեսությունների շատ ճյուղերի գործնական դեկավարման համար են և սովորաբար լինում են խոշորամասշտար: Ուսումնական քարտեզները, ի տարբերություն առաջին երկուսի, բավական ընդհանրացված են և արտացոլում են միայն ընդհանուր օրինաշափություններ: Հիմնականում լինում են փոքրամասշտար:

## Գ.

97. ԳԱՐԱԹՆԱՅԻՆ ԲՈՂԲՈՁԻ ՍԿՃՐԱՎՈՐՈՒՄ—ЗАЛОЖЕНИЕ ВЕРХУШЕЧНОЙ ПОЧКИ Մատղաշ ծառաթփային բուսերի ֆենոլոգիական փուլ: Բնայուղի ծայրում բացվում են վերջին վերենները, և երկում է գագաթնային բողբոչը:

98. ԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԳ—ПЕРВАЯ ВЕСЕННЯЯ ПЕСНЬ Թոշունների գարնանային ֆենոլոգիական փուլ: Բնորոշ է երգող թոշունների՝ արտույտների, կառների, սոխակների, մարգահավերի համար:

99. ԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՐԹՆԱՅՄԱՆ ԱԿՐԹՆԱՅՄԱՆ ՍԿԻՖ—НАЧАЛО ВЕСЕННЕГО ПРОБУЖДЕНИЯ Զմռանը բուն մտնող կաթնասունների (արջ, գետնասկյուռ, և այլն) կյանքի ֆենոլոգիական փուլ: Նշվում է գարնան այն օրը, երբ նկատվում են հիշված կաթնասունների առանձնյակները կամ դրանց հետքերը:

100. ԳԱՐԱՆԱՅԻՆ ՀՈՐԴԱՅՄԱՆ ԱՎԱՐՏ—ПРЕКРАЩЕНИЕ ВЕСЕННЕГО ПАВОДКА Գետերի սեղոնային երկույթ: Այն օրը, երբ գարնանային հորդացումից հետո գետը նորից քաշվում է իր մշտական հունը:

101. ԳԱՐՈՒԽ—ВЕСНА Երկրագնդի մակերևույթի վրա արեգակնային էներգիայի հաշվեկշռի աճի ժամանակահատված, որը հյուսիսային կիսագնդում տևում է գարնանային գիշերահավասարից մինչեւ ամառային աշրկադրի: Գարնան կիմմայական սկիզբն ընդունված է այն օրը, երբ օդի միջին ջերմաստիճանը հաստատում կերպով բարձրանում է  $0^{\circ}$ -ից վեր: Գարնան բնական (կամ ֆենոլոգիական) սահմաններն առանձնացվում են այդ վայրին բնորոշ ֆենոնշանացույցերով: Հյուսիսային կիսագնդում գարնան օրացուցային ամիսներն են մարտը, ապրիլը, մայիսը, հարավային կիսագնդում՝ սեպտեմբերը, հոկտեմբերը և նոյեմբերը:

102. ԳԵՏԱՎԱՐԱՐՈՒՄ—ПОЛОВОДЬЕ Գետաջրերի ամենամյա, սովորաբար նույն սեղոնում կրկնվող, համեմատաբար երկարատև ու նշանա-

կալից ավելացում, որն առաջացնում է նրա մակարդակի բարձրացում։ Սովորաբար ուղեկցվում է գետահունից ջրերի գուրս գալով և ողողահունի ողողմամբ։ Առաջանում է ջրի ուժեղ և տեսական հոսքի հետեանքով, որը կարող է պայմանավորված լինել հարթավայրերում ձյան գարնանացին հալոցքով (գարնանային գետավարարում), լեռներում ձյան ու սառուցի ամառային հալոցքով (ամառային գետավարարում), սևզոնային առավելագույն տեղումներով և այլն։

103. ԳԵՏԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀՈՐՄԱՅՈՒՄ—ՄԱԿՍԻՄՈՒՄ ՊԱՅՈԴ-  
ԿԱ ՀԱ ՐԵԿԵ Տարվա այն օրը, երբ հատուկ շրաչակական ձողաբանունը ցույց է տալիս գետի առավելագույն մակարդակը։

104. ԳՅՈՒՂԱՏԵԽՍԱԿԱՆ ԿԱՐՄԱՅԱԿԱՆ ՀԵՂՄԱՅԱԿԱՆԻՑՈՒԹՅՈՒՆ—ՍԵԼՅԱԿՈԽ-  
ՅԱԿՏՎԵՆՆԱ ԿԼԻՄԱՏՈЛОԳԻՅԱ Կիմմայափության բաժին, որը  
կիմման ուսումնասիրում է որպես գյուղատնտեսական արտադրության  
գործուն։ Զբաղվում է կիմմայի գյուղատնտեսական գնահատմամբ, ագրո-  
կիմմայական շրջանացմամբ, ազրուեխնիկայի նոր եղանակների կիմմայա-  
կան հիմնագործմամբ, եղանակի անբարեխպատ երեւյների դեմ պայ-  
քարի եղանակների մշակմամբ և այլն։

105. ԳՅՈՒՂԱՏԵԽՍԱԿԱՆ ՖԵՆՈԼՈԳԻՅԱ—ՍԵԼՅԱԿՈԽՅԱԿՏՎԵՆ-  
ՆԱՅ ՓԵՆՈԼՈԳԻՅԱ Ֆենոլոգիայի ճյուղ, որն գրաղվում է մշակովի և  
վայրի, մարդու համար օգտակար բույսերի (անտառային պտղատու և  
հատապտղատու ծառաթփեր, հացազգիներ, տեխնիկական ու կերային  
մշակովի բույսեր, մոլախոտեր, թունավոր բույսեր, ցանովի և բնական  
խոտհարքներ և այլ) զարգացման սեղոնային որիմի ուսումնասիրմամբ,  
գյուղատնտեսական մշակովի բույսերի ցանքսի և այլ աշխատանքների  
լավագույն ժամկետների բնական նշանացույցերի որոշմամբ։

106. ԳՅՈՒՂԱՏԵԽՍԱԿԱՆ ՖԵՆՈԼՈԳԻԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ—ՍԵԼՅԱԿՈ-  
ԽՅԱԿՏՎԵՆՆԱ ՓԵՆՈԼՈԳԻԿԱԿԱՆ ԿԱՐՏЫ։ Քաշտային,  
բանջարանոցային և պտղատու մշակովի բույսերի առանձին սորտերի  
ամի ու զարգացման սեղոնային փուլերի, արտաշրջանի սկզբան և ա-  
վարտի, խոտհնձի սկսման, մոլախոտերի զարգացման սեղոնային փուլե-  
րի, մշակովի բույսերի վնասատուների ու հիվանդությունների կարեոր սե-  
ղոնային երեւյների, սեղոնային աշխատանքների բարտեզներ, ինչպես  
նաև հողօպտագործման տարրեր համակարգերի և առանձին մշակովի բույ-  
սերի գիտականորեն պատճառաբանված տեղարաշխումը պատկերող բար-  
տեղներ։

107\*. ԳՈՅԱՄԻՉԱՎԱՅՐ—СРЕДА ОБИТАНИЯ Այս կամ այն օրով-  
նիզմի կյանքի կենսական և ոչ կենսական պայմանների ամբողջությունը։

## ¶

108. ԳԱԴԱՐԻ ՍԵԶՈՆԱՅԻՆ ՇՐՋԱՆ—СЕЗОННЫЙ ПЕРИОД ПО-  
КОЯ ՏԵ՛Ր ԶՄԵՐՆԱԴԱԴԱՐ:

109. ԳԵՂԻՆ ՀԱՍՈՒԱՅՈՒՄ—ԺԵԼՏԱՅ ՍՊԸԱ-  
ՅԻՆ ՀԱՍՈՒԱՅՈՒՄ:

110. ԳԻՏՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄՐԱԳԻՐ—ՐԱԲՈՎԱ ՊՐՈ-  
ՐԱΜՄԱ ՆԱԲԼՈՒԴԵՆԻ Ֆենոլոգիական դիտորյեկտների ընտրման  
աշխատանքային ծրագիր: Ընդգրկում է տվյալ տեղանքում ամենից հա-  
ճախ հանդիպող ու դիտողին լավ ձանոթ բույսեր, թռչուններ, միջատներ  
և այլն:

111. ԳԻՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐՁ ՇԱՐՔԻ ԵՐԿԱՐԱՅՈՒՄ—ՊՐԻՎԵԴԵՆԻ Է  
ԿՈՐՈՒԿՈՎ ՌՅԱ ՆԱԲԼՈՒԴԵՆԻ Կ ՃԼԻՆՈՒՄ Հաշվար-  
կային եղանակով ֆենոլոգիական դիտումների կարճ շարքի երկարացում:  
Այդ նպատակով դիտումների կարճ շարք ունեցող վայրից ու հեռու ըն-  
տրվում է նույն տարիների դիտումների երկարամյա շարք ունեցող դի-  
տավայր: Որոշվում են հետազոտվող ֆենոլոգիական սկսման ժամկետների  
տարրերությունները այդ երկու դիտավայրերի նույն տարիների համար:  
Հաշվարկվում է միջին տարրերությունը, որը գումարվում է երկարամյա  
շարք ունեցող դիտավայրի բազմամյա միջին մեծությանը: Ստացված  
թիվը կիմի դիտումների կարճ շարք ունեցող դիտավայրի նույն ֆենո-  
փուլի բազմամյա միջին ժամկետը: Դա լրիվ պիտանի է հետազա հետա-  
զոտությունների ու մշակման համար:

112. ԳԻՏՕԲՅԵԿՏ ՆԱԲԼՈՒԴԵՆԻ Բույսերի և կենդա-  
նիների որոշակի տեսակ, ինչպես նաև անկենդան բնության տարր, որը  
տարվա ընթացքում սեղոնային փոփոխությունների է ենթարկվում: Ան-  
կենդան բնությանը վերաբերվում են կլիմայի տարրերը (օդի ջերմաստի-  
ճան, մինուրոտային տեղումներ, ճառագայթում), ջրամբարները (գետեր,  
լճեր, ծովերի ափամերձ հատվածներ): Ֆենոլոգիական դիտումների օր-  
յեկտներ են համարվում նաև տարվա ընթացքում իրենց արտաքին տես-  
քը փոխող բուսական համակեցություններն ու լանդշաֆտները: Մասերն  
ընտրվում են միջին տարիքի, թիերթ՝ պտղաբերության հասակի: Ըստ  
որում, դրանք պետք է անպատճառ շխուզված և առողջ լինեն:

## Ե

113. ԵԼԾԽԹԱՅԱԿԵՏ—ՍՏԱՐՏՈՎԱ ՏՈՉԿԱ Մերձարևադարձերի  
սահմանի վրա հյուսիսային պտղատումների (խնձորենի, բալենի և այլն)  
վեգետացիայի սկզբի որոշումը օրգանական դադարի ավարտի ժամկետով:  
Տարրեր բուսատևակների ելքնացագակետերի տարրերություններով բա-  
ցատրվում է ֆենոլոգիական շրջումների կամ ֆենոլոգիական ընդհանու-  
դումների մեծ մասը:

114. ՍՂԱՆԱԿ—ՊՈԳՈԴԱ Օդերկութաբանական տարրերի այս կամ  
այն միագումարով բնորոշվող մինուրոտի վիճակը՝ տվյալ պահին կամ  
տվյալ վայրում որևէ ժամանակի ընթացքում: Հետևանք է անընդհատ փո-  
փոխվող մինուրոտային պրոցեսների:

115. ԵՂԱՆԱԿԱԴԱՐՁ—ВОЗВРАТ ПОГОДЫ Կարճատե՛ վերադարձ  
նախորդ սեղոնին բնորոշ չերմաստիճաններին: Հնացած տերմին է:

116\*. ԵՂԱՆԱԿԱՓՈԽՈՒՄ—ПЕРЕЛОМ ПОГОДЫ Տարվա որևէ ժա-  
մանակահատվածին բնորոշ չերմաստիճանի անցումը դրան հաջորդող  
ժամանակահատվածին բնորոշ չերմաստիճանի:

117. ԵՂԱՄՄ—ԻՆԵՐ Բյուրեղային սառցի անհավասարաշափ հաս-  
տության շերտ՝ հողի, խոտածածկի և այլ առարկաների մակերեսովին:  
Առաջանում է օդի ջրային գոլորշիները ճառագայթման շնորհիլ շրջապա-  
տի չերմաստիճանից ցածր՝ բացասական չերմաստիճանների իշխելու դեպ-  
քում: Գոյանում է հիմնականում պարզկա, խաղաղ գիշերներին:

118. ԵՂԶՅՈՒԹԱՓՈԽ—СМЕНА РОГОВ Որմզգեղերի, այժյամնե-  
րի, եղջբունների կյանքի հիմնական սեղոնային երկույթներից մենքը: Նա-  
խորդ տարվա եղջրացած եղջյուրները բնկնում են և փոխարենը սկսում  
են աճել նորերը:

119. ԵԽԹԱՍԵԶՈՆ—ПОДСЕЗОН, СУБСЕЗОН Տե՛ս ԲՆԱԿԱՆ ԵԽ-  
ԹԱՍԵԶՈՆ:

120. ԵԽԱԳԵՄ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ—ТРЕХЛИКОЕ СООБЩЕСТВО  
Բուսական համակեցություն, որն ունի երեք գեմբ՝ գարնանային (առաջին  
գեմբ), ամառային (երկրորդ գեմբ), վեգետացիալի և դադարի շրջան  
(երրորդ գեմբ): Տերմինն առաջարկել է Կ. Վ. Ստանյուկովիցը:

121. ԵԽԱՓՈԽ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ—ТРЕХФАЗНОЕ СООБЩЕСТ-  
ВО Տե՛ս ԵԽԱԳԵՄ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ:

122. ԵՐԱԾՏ—ЗАСУХА Օդի բարձր չերմաստիճանների և ցածր  
խոնավության պայմաններում մինուրոտային տեղումների երկարատե՛ ու  
զգալի անբավարարության ժամանակաշրջան (գարնանը և աշնանը): Ա-  
ռաջացնում է հողի խոնավության պաշարների սպառում (հողային ե-  
րաշտ), դաշտային մշակովի բույսերի բերբառավության անկում կամ բեր-  
քի ոչնչացում:

123. ԵՐԿԱՄՅԱ ԲՈՒՅՍ—ДВУХЛЕТНЕЕ РАСТЕНИЕ Վեգետա-  
ցիալի երկու շրջան ունեցող բույս: Առաջին տարում զարգանում է տերե-  
ների վարդակը, երկրորդ տարում՝ ծաղկում և պտղարերում է, որից հե-  
տո շորանում է:

124. ԵՐԿԱՅԱԿԱՆ ՖԵՆՈԼՈԳԻԿԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՓՈԽՈՒՄ—ДОЛГОТ-  
НЫЙ ФЕНОЛОГИЧЕСКИЙ ГРАДИЕНТ Ժամանակ (օրեր), որի  
ընթացքում սեղոնային երկույթը զուգահեռականի երկարությամբ  $5^{\circ}$  է  
անցնում: Ա. Հոպկինսի տվյալներով: Հյուսիսային Ամերիկայի հարթավայ-  
րերում գարնանային և ամառային սեղոնային երկույթները խաղաղ օվ-  
կիանոսից մինչեւ Ատլանտյան օվկիանոսն ընկած զուգահեռականների եր-  
կարությամբ, յուրաքանչյուր 5° անցնելիս ուշանում են միշինը շրու օրով:

125. ԵՐԿԱՐՍԶՎԱՆ ՄԱՂԱՄՄ ԲՈՒՅՍԵՐ—РАСТЕНИЯ С ОЧЕНЬ  
РАСТЯНУТЫМ ЦВЕТЕНИЕМ Բույսեր, որոնց ծաղկումը երբեմն

տևում է համարյա ամբողջ տարին (օրինակ, մարգարտածաղիկը՝ Bellis perennis):

126. ԵՐԿԱՐԱՏԵՎ ԱՃԻ ԲՈՒՅՍՈՒԹ—РАСТЕНИЯ С ДЛИТЕЛЬНЫМ ПЕРИОДОМ ВЕГЕТАЦИИ Լեռնային բուսեր, հիմնականում կիսաթփիկներ, որոնց ֆենոլոգիական փուլերի զարգացման անողությունը երկարաձգված է:

127. ԵՐԿԱՐՈՂ ԸՆՉՅՈՒԴՆԵՐԻ ԱՃ ԵՎ ՀԱՍՈՒԽԱՅՈՒՄ—РОСТ И ВЫЗРЕВАНИЕ ПОБЕГОВ ПРОДОЛЖЕНИЯ Լајнштейнере ծառերի ընձյուղների և դրանց օրգանների սեղոնային զարգացման էտапы: Կազմված է հետեւյալ ֆենոլոգիական փուլերից. ընձյուղաճի սկիզբ, ընձյուղաճի ավարտ, ընձյուղների հիմնամասերի փայտացում, ընձյուղների ամբողջական փայտացում:

128. ԵՐԿԱՐՈՒՄ—УДЛИНЕНИЕ Բուսերի վեգետատիվ ֆենոլоп-գիական փուլ: Բնորոշվում է միջնանգույցների երկարացմամբ, ընձյուղների ինտենսիվ աճով:

129. ԵՐԿԳԵՄ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ—ДВУЛИКОЕ СООБЩЕСТВО: Ամառային վեգետացիա (*առաջին դեմք*) և դադարի շրջան (*երկրորդ դեմք*) ունեցող բուսական համակեցություն: Տերմինն առաջարկել է Կ. Վ. Ստանյուկովիչը:

130. ԵՐԿԾՈՒՆ ԲՈՒՅՍՈՒԹ—ДВУДОМНЫЕ РАСТЕНИЯ Բուսեր, որոնց մի մասի վրա կան միայն արական ծաղկներ, մյուսների վրա՝ միայն հիգական (*կանեփ, եղինջ, բարդի, ուռենի և այլն*):

131. ԵՐԿՐԱՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՖԵՆՈԻՆԴԻԿԱՏՈՐ Երկրահամակարգի սեղոնային վիճակը բնորոշող երկույթ: Ազդանշում է ամբողջ երկրահամակարգի տարեկան լիաշրջանի առանձին էտապների սկսվելը կամ մոտենալը: Օրինակ, սերմնագուաղների վերադարձը ՄԱՀՄ եվրոպական մասում ազդանշում է դարնան սկիզբը: Նույն տեղում կելու կանաչումը հուշում է իսկական կամ բուսն գարունը սկսվելու մասին և այլն: Ժամանակակից նշանացուցային ֆենոլոգիային բնորոշ է տարրեր երկրների համար իրենց երկրահամակարգին ֆենոնշանացուցեր ստեղծելու գործումը:

132. ԵՐՔՈՐԴ ՏԵՐԵՎԱԿ.—ТРЕТИЙ ЛИСТ Գարնանը խոտարույսերի երրորդ տերերը բացվելու օրը:

133. ԵՐԵՎՈՒՅԹ—ЯВЛЕНИЕ ՏԵ՛Ր ՄԵԶՈՆԱՅԻՆ ԵՐԵՎՈՒԻՅԹ:

134. ԵՐՓՆԵՐԱՄԱԿՈՒՄ—ЗАПЕСТРЕНИЕ Բուսական օրգանների մահցման սկիզբը ճիշտ գրանցելու հարմար սեղոնային երկույթ: Այն օրը, երբ աշքաշափով ծառի կամ թփի տերեւների կեսը դեղնել կամ կարմըրել է, իսկ մյուս կեսը դեռ կանալ է:

## 9

135. ԶՈՈՉԵՆՈՒՐՈՒՄ—ЗООФЕНОЛОГИЯ ՏԵ՛Ր ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՖԵՆՈԼՈԳԻԱ:

136. ՁՈՎԱՄԵՐ ԲՈՒՅՍԵՐ—МИКРОТЕРМНЫЕ РАСТЕНИЯ Համեմատաբար զով և կարճատև ամբան պայմաններում զարգացող, լուսասեր բույսեր (օրինակ, եղինի՝ *Picea obovata*):

137. ԶԵՐՈՂԱԿԱՆ ՖԻՏՈՄՆԵՐ—ՊԱՐԱԼԼԵԼԻՆԻ  
ՖԵНОЛОГИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ ՅԵՐՈՂԱԿԱՆ ՊԻՏՈՎԱՆ  
ՀԵՂԱ-  
ՆԱԿ: Ուսումնասիրվող բույսերի և զրանց վրա ազդող բնական գործոն-  
ների (օդի չերմաստիճանը ու խոնավությունը, հողի չերմաստիճանը ու խո-  
նավությունը, տեղումների քանակը) ընթացքի միաժամանակյա ֆերողակա-  
կան դիտումներ:

138. ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄ—ГОН, СПАРИВАНИЕ Կաթնասունների  
կյանքի սեղոնային երևույթ։ Որպես սկիզբ ընդունվում է այն օրը, երբ  
առաջին անգամ նկատվում են դիտվող կենդանիների հարսանիկան վարքի  
նշաններ, իսկ ավարտված է համարվում այն օրը, որից հետո այդ կեն-  
դանիների հարսանիկան վարքի նշաններ այլևս չեն դիտվում։

六

139. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԵԶՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ—ԷԿՈЛО-  
ГИЧЕСКАЯ СЕЗОННАЯ ИЗМЕНЧИВОСТЬ էկոլոգիական պայման-  
ների ամբողջ կոմպլեքսի առանձին մասերի սեղուային դարգացման  
տարրերությունների շափը:

140. ԿԱՐՅԵԽՈՂՎԱԿԱՆ ԴԻՏՈՒՄՆԵՐ—ԷԿՈЛОԳՈ-ՖԵНОЛОГИЧЕС-  
ԿИЕ НАБЛЮДЕНИЯ Ֆիտопհեռոլզիական դիտումներ, որոնց նպա-  
տակն է բացահայտել բույսերի զարգացման ոիթմի կախվածությունը  
շրջապատղ միջավայրի գործոններից:

141. ԵԿՈՎԱՐՄԱՆ ԱՆԴԻ ՀԱԿԱՆՈՐԾԵՆ կենդանի օրդա-  
նիկմին շրջապատող կլիմայական պարմանները:

142. Εγιαστη—ΕΚΤΟΠΟΙ Οργωνηφαδικοις, ζηζη, φρονιμωι, μηκροπικη-  
μωι, και αλλη φρονδονηκοις, απανδινωνηστηκοις θηγονικοις, μηνικωιστηη:

143. ԷԿՈՏԻՊԵՐ—ԷԿՈՏԻՊԵՐ ՏԾԱԿԻ սահմաններում գոյութիւնը ունեցող ինքնուրույն տարրերակներ, որոնք որոշակի աճելավայրի հատկապնդ, առանձնահատուկ ժառանգական ձևեր են: Ընդարձակ տարածություն, օրինակ, ամբողջ մայրցամաք գրավող տեսակը, այդ ցամաքի տարրեր ծայրերում՝ աճելավայրի տարրեր պայմանների ազդեցության տակ, վեր է ածվում մի շարք էկոտիպերի: Վերցիններս կարող են իրարից տարբերվել ընդհանուր կազմությամբ, բարձրությամբ, ցողունների թիվով և տերևակալմամբ, վեգետացիայի տևողությամբ, արտադրողականությամբ, հիվանդությունների հանդեպ զիմացկունությամբ, քիմիական առանձնահատկություններով, ցրտադիմացկությամբ, երաշտադիմացկունությամբ և այլն:

144. ԷԼՏՈՄԱՆԱԿՈՂԻԿԱ-ԷՆՏՈՄՈՖԵՆՈԼՈԳԻԱ ՏԵՇ ՄԻՋԱՏ-  
ՆԵՐԻ ՖԵՆՈՂԻԿԱ:

Ը

146. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԵԽՈԼՈԳԻԱ. — ՕԲԾԱՅ ՓԵԽՈԼՈԳԻԱ Ֆենոլո-  
գիայի բաժին, որն ուսումնասիրում է ֆենոլիսարհագրական և երկրա-  
համակարգի կառուցվածքի տարրերությունների ընդհանուր օրինաշափու-  
թյունները: Բացահայտում է երկրահամակարգերի սեղոնային ոիթմիկայի  
կախվածությունը դրանց աշխարհագրական դիրքից, այդ ոիթմիկայի վրա-  
տեղանքի աշխարհագրական լայնության, բացարձակ բարձրության, ցա-  
մարայնության աստիճանի, ջերման և խոնավապահովվածության, տեղա-  
կան պայմանների՝ ռելիեֆի, ջրամբարների մոտիկության, հողերի տե-  
սակների, բուսականության, մարդու տնտեսական գործունեության, բա-  
ղարի և այլ զործունների ազդեցությունները: Ընդհանուր ֆենոլոգիայի  
հիմնական ինոգիրն է երկրահամակարգերի սեղոնային ոիթմիկայի ա-  
մենամյա, ինչպես նաև երկարատև ժամանակահատվածի ընթացքում այդ  
ոիթմիկայի փոփոխման միտումի ուսումնասիրում:

147. ԸՆՁՅՈՒՂԱԾ—РОСТ ПОБЕГОВ Բույսերի վեգետատիվ ֆենոլո-  
գիական փուլ: Բուսատեսակների մի մասի մոտ (սոճապիններ) սկսվում է  
մինչև մատղաշ տերևների հայտնվելը: Բուսատեսակների մեկ այլ խմբի  
(կաղամախի, ուսենի) ընձյուղները աճում են մատղաշ տերևների հետ  
միաժամանակ: Բուսատեսակների երրորդ խմբի (խեծափիճի, կելի) այդ  
փուլը սկսվում է առաջին տերևները հայտնվելուց հետո: Այդ ֆենոլոգի-  
ւի սկիզբը և ավարտը որոշվում են կրկնվող շափումներով:

148. ԸՆՁՅՈՒՂԱԾ—ՎՏՈՐԻԿԱԿԱՆ РОСТ ПОБЕГОВ  
Արդեն ձևավորված վերջնաբողոքությունը, շրջակա պայմանների ազդեցության  
տակ, նույն տարրում նոր ընձյուղի առաջանալը և ձևավորվելը:

149. ԸՆՁՅՈՒՂԱԾ—ՓՈՅՏԱՅՈՒՄ—ՕԴՐԵՎԵԾՆԵԿԻ ՊՈԲԵԳՈՎ  
Ընձյուղների՝ ձմռանը բնորոշ, արտաքին ծածկի ձևավորում: Կեղեի տակ  
առաջանալը է խցանաշերտ, իսկ ընձյուղները ստանում են կարմրավուն  
կամ գորշ գույն: Ֆենոլոգիական այս փուլը ստորաբաժանվում է երեք  
ենթափուլի: Առաջին ենթափուլը, երբ նոր, դեռևս աճող ընձյուղների ստո-  
րին մասերը ձեռք են բերում կարմրավուն կամ գորշ գույն, սկսում են  
փայտանալ: Եղնու, դիմինի ընձյուղներն այս ենթափուլում գեռա-  
այնքան թույլ են, որ ծանրության տակ ծովում են: Երկրորդ ենթափու-  
լում փայտացումը հասնում է ընձյուղների երկարության կեսին: Երրորդ  
ենթափուլում փայտացումը հասնում է ընձյուղների վերնամասերը: Փայ-  
տացած ընձյուղը կտրուկ ոլորքի ժամանակ, սովորաբար, ոչ թե ճկվում,  
այլ կոտրվում է՝ արձակելով բնորոշ ձայն: Ընձյուղի կեղեւը եղունգով մ-  
բերձվում:

150. ԲԱԿԱԾՔ-ՕՊԱԾ Բույսերի շորացած մասեր, որոնք տերևաթափի և ճյուղաթափի ժամանակ ընկել են գետնին կամ ջրամբարները։ Հողի մակերեսութային շերտը թափվածքի հետ ստանում է ոչ միայն բույսերի սինթեզած օրգանական, այլև հողի տարբեր հորիզոններից ստացած հանքային (մոխրային) նյութեր։

151. ԹԱՐՅԱԿՈՒՄ ԵՐՋԻՆ—ԼԱՏԵНՏՆԻ ՊԵՐԻՕԴ ՏՎԱ ԽԱԽԱ-  
ԿԱՆ ԴԱՄԱԿԱՐԳՅԱՆ:

153. ԹՂԹԱԿԻՑ ՖԵՆՈԼՈԳ ԲՆԱ-  
ՄԵՐ, որն իր բնակության վայրում, հիմնականում, կամավոր հիմունք-  
ներով և անվարձահատուց, մշտապես ընդհանուր ֆենոլոգիական պր-  
ատումներ է կատարում և ստացված տվյալները հաղորդում է համապա-  
տասխան ֆենոլոգիական կենտրոն:

154. ԹՌՉՆԱՅԵԽՈՂԳԻԱ.—ՖԵՆՈԼՈԳԻԱ ՊՏԻЦ Ֆենոլոգիայի ձևուղ, որն զբաղվում է վայրի և ընտանի թռչունների աճի ու զարգացման սեղոնային երևությունների ուսումնասիրմամբ։ Դիտվում են թռչունների վիճակիցքն ու ավարտը, երգող թռչունների առաջին երգը, ձվադրման սկիզբը, ճագերի առաջին թռիչքը բնից և այլն։

155. ΦΩΦΙΚΙΛΟΠΙΤΣ—ΚΥΨΕΝΙΕ θυπωροπιτσέρη, ηλιανθιφραδέας ζω-  
γαρδήνερη φωράγωμαν θεληποθικών φοιτι: Στηρρόβεντζα σηροπιναγήν  
ζωνηπιγνέρηρηγ' ονπιραθιπιψί δέκερη και φερράτιντα ζωνηπιγνέρηρηγ'  
խտաթուփի δέկερη φρα ընձյուղներη και հավելյալ արմատների  
առաջացումը: Ընդ որում, հանդուցները դասավորված են միմյանց  
շատ մոտ, համարյա այնպէս, որ միշհանդուցները հազիվ են նշամարվում:  
Ֆենηποθικώն այս փուլը համարվում է սկսված, երբ կողային ընձյուղ-  
ների առաջին տերևների ծայրերը երևում են զյսավոր ընձյուղի տերևա-  
բնիք: Հազարգիները սովորաբար սկսում են թփակայել երրորդ տերևի

երեալու հետ միաժամանակ, կամ որոշ ժամանակ հետո: Կողային ընդուղները հայտնվում են տերեածոցերում՝ ցողունի ստորգետնյա հանգույցների վրա: Հատիկը պահանջվող խորությամբ ցանելու դեպքում, այդ հանգույցները դասավորվում են անմիջականորեն մեկը մյուսի վրա՝ առաջացնելով թփակալման հանգույց:

## Ի

156. ԻԶՈԳԻՄ—ИЗОЛИНИЯ *ՏԵ՛Ս ՀԱՎԱՍԱՐԱԳԻՄ*:
157. ԻԶՈԽՐՈՆ—ИЗОХРОНА *ՏԵ՛Ս ՀԱՎԱՍԱՐԱԺԱՄԱԿ*:
158. ԻԶՕՖԵՆ—ИЗОФЕНА *ՏԵ՛Ս ՀԱՎԱՍԱՐԱՅԵՆ*:
159. ԻՆՏԵԳՐԱԼԻ ՄԵԹՈԴ—ИНТЕГРАЛЬНЫЙ МЕТОД *ՏԵ՛Ս ՑԵՆՏՐԱԼԻ ՄԵԹՈԴ* *ԻՆՏԵԳՐԱԼ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴ*:

## Լ

160. ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՖԵՆՈԼՈԳԻԱ *ՏԵ՛Ս ԱՇԽԱՐՉԱԳՐԱԿԱՆ ՖԵՆՈԼՈԳԻԱ*:

161. ԼԱՆԴՇԱՖՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵԶՈՆԱՅԻՆ ՏԵՍՈՒՅՅԹ—ОБЩИЙ СЕЗОННЫЙ АСПЕКТ ЛАНДШАФТА կանդշաֆտի սեզонային ամբողջական տեսքը: Սեզոնային ընդհանուր տեսույթներից են. ձմեռային ձյունածածկի, գարնանային «մերկ ընության» (ձյունը հալվել է, բայց րույսերը դեռ առանց տերենների են), ամառնականաշի, ոսկե աշնան, ձմեռնամուտի տեսույթները: Առանձին աշխարհագրական շրջաններին բնորոշ են իրենց ընդհանուր սեզոնային տեսույթները (անապատներին՝ խիստ շոգ, չորային ամռան անապատային տեսույթը, արկտիկական շրջաններին՝ արկտիկական ամռային ցերեկվա և արկտիկական ձմեռային դիշրվա տեսույթները և այլն):

162. ԼԱՆԴՇԱՖՏԻ ՄԱՍՆԱԿԻ ՍԵԶՈՆԱՅԻՆ ՏԵՍՈՒՅՅԹ—ЧАСТНЫЙ СЕЗОННЫЙ АСПЕКТ ЛАНДШАФТА կանդշաֆտի որևէ հատվածի ընդհանուր սեզոնային տեսքը: Օրինակ, լանդշաֆտի ընդհանուր անկենդպան պատկերի վրա բուսական առանձին համակեցությունների կանաչը, չորային շրջաններում գարնանը և ամռանը բուսական օագիսների կանաչը, հարավում՝ ձմռան պայմաններում ձմեռնականաշ րույսերի կանաչը: Սյապիսին են նաև բուսական առանձին համակեցությունների ծագկման (մարգաղետինների ու տափաստանների, պտղատու այգիների, քաղաքային դրսայգինների, արեածաղկի, երեքնուկի և այլ բուսատեսակների ու մշակովի բույսերի) տեսույթները, նույն պտղատու այգիներում և գաշտերում պտուղների ու տարրեր մշակովի բույսերի հասունացման, լանդշաֆտի դեռևս կանաչ հանրանկարի վրա վազ դեղնող բուսական համակեցությունների աշնանային տեսույթները և այլն: Դրանց շարքին են դասվում նաև բարդ բազմաշարանարկ բուսական համակեցությունների

առանձին շարահարկերի տևողվեները: Ավելի սակավ, լանդշաֆտների մասնակի սեղոնային տևողվեները ստեղծվում են անօրգանական բնության սեղոնային երևությներով (գետերի գարնանային, ամառային կամ աշնանային հորդացում կամ վարարում, չորացին շրջաններում ամռանը ջրամբարների ցամարում և այլն): Որոշ դեպքերում, մասնակի սեղոնային տևողվեները ստեղծում են կենդանիները: Այսպէս, լանդշաֆտի ընդհանուր պատկերում որոշ փոփոխություններ են մտցնում չվող թռչունների գարնանային վերադարձն ու աշնանային չուն, մոծակների, մլակների ամպերի հայտնվեն ու վերանալը և այլն:

163. ԱՅՆՉԵՐԻ ՏԵՂՄԻՐՈՒԹՅՈՒՆ—ԷԿСПՈԶИЦИЯ ԾԿԼՈՆՈՎ ԵԽՈՆՆԵՐԻ, ՀՈՎՄԱՆՆԵՐԻ, ՀԵՂԵՂԱՄՆԵՐԻ, ՃՈՐԱԿԻՆՆԵՐԻ և ՈԵԼԻԵՖԻ ՃԵԿԵՐԻ լանջերի կողմնորոշումը աշխարհի կողմերի և հորիզոնի հարթության, ինչպես նաև տիրապետող օգային հոսանքների նկատմամբ: Պայմանավորվում է միկրոկլիմայական առանձնահատկությունները, հողերի, բուսականության և ամրող լանդշաֆտի բնույթը:

164. ԼԻՍԴԱԴԱԲ—ПОЛНАЯ ПАУЗА ԲՈւՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԵցՈՎՐԴՅԱՆ ՔԱՐԳԱԳԵՄԱՆ ՄԻԱԿԱՍԻՐ ՀԱՆԳԻՄՈՒ: ՆՈՎՅԱՆ Է՝ ԶՄԵՌՆԱԴԱԲԱԲ: ՏԵՐՄԻՆՆ ԱՊԱՀԱՐԿԵԼ Է Կ. Վ. ՍԱՄԱՆԴԱԿՈՎԻՀԸ:

165. ԼԻԹ. ԳԵՐԴԻՆ ՀԱՍՈՒՆԱՅՈՒՄ—ПОЛНАЯ ЖЕЛТАЯ СПЕДЮОСТЬ ՎԿՈՒՀԻ ՀԱՍՈՒՆԱԳԵՄԱՆ ՓԵԽՈՂՈՂԻԿԱԿԱՆ ՓՈՎ, ԵՐՐ ԲՈՒՄԻ ՄԻՔԱՆԵՐԻ մինչև գաղաթը թառամում և կիսով շափ թափվում են: Դեղնած տուփիկների գերակշռող մասում սերմերը հասուն վիճակին բնորոշ ամուր և գարնագույն են:

166. ԼԻԹ. ՀԱՍՈՒՆԱՅՈՒՄ—ПОЛНАЯ СПЕЛОСТЬ Հացաղիների հասունացման փեխողղիկական փուլ, երբ հատիկը կարծր է և զանակով սեղմելիս կոտրվում է: Հուրանափոր հացաղիների լրիվ հասունացումը բրոշվում է հուրանի վերին կեսի հատիկների կարծրացմամբ:

167. ԼԻԹ. ՏԵՐՎԱԾԱՓԱԿԱՆ ՕՊԱԴԵՆԻ ԼԻСΤՅԵՎ Մառաթփային բույսերի ֆենոլողիկական փուլ, երբ սաղարթի լրիվ մերկացած է կամ ճյուղերի ծայրերին պահպանվել են միայն առանձին տերևներ: Նույն իմաստով օգտագործվում է նաև տերեաթափի ավարտ տերմինը:

168. ԼՈՒՍԱՊԱՐԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ—ФОТООПЕРИОДИЗМ Ցերեկային լուսավորվածության տեսղության (լուսի և մթության պարերական հերթափոխման) ազգնությունը բույսերի ու կենդանիների զարգացման վրա: Լուսապարերականության երկությներ հանդիպում են կննդաների ու բույսերի բոլոր տեսակների ու դասերի ներկայացուցիչների մոտ և ծառայում են կենսագործունեության ամենաբազմազան սեղոնային պրոցեսների սկաման ժամկետների կարգավորմանը: Տարբերում են երկար ցերեկվա (բարձր լայնությունների), բարեխառն և կարճ ցերեկվա (արեաղարձների և մերձարեաղարձների) բույսեր:

169°. ԽՏԱԿՈՒՈՆ—ПЛОТНЫЙ БУТОН կոկониակալման ֆենոլո-  
փական փուլի առաջին ենթափուլ, երբ ծաղկապսակը դեռ թաքնված է  
ծաղկաբաժակում: Տե՛ս նաև ԿՈՒՇԱԿԱՀՈՒՄ:

170. ԽՈՐԵԱԿ—СУХОВЕЙ Բարձր չերմաստիճան ( $20-25^{\circ}$ ), հա-  
րաբրական փորք խոնավություն և օդի խոնավության մեծ պակաս ու-  
նեցող քամի: Բնորոշ է ՍՍՀՄ տափաստանային և կիսանապատային  
շրջանների ամռանը: Քամու արագությունը համար է վայրկյանում  $15-20$   
մետրի, հարաբրական խոնավությունը  $30$  տոկոսից ու ավելի: Ծողի խո-  
նավության պակասի հետ զուգակցված կարող է առաջանել բույսերի  
թոշնում և ոչնչացում:

## Օ

171. ԾԱՂԿԱՅՈՂՔՈԶՆԵՐԻ ՈՒԹՉՈՒՄ—НАБУХАНИЕ ЦВЕТОЧ-  
НЫХ ПОЧЕК ՏԵ՛Ս ԲՈՂՔՈՉԱՈՒԹՉՈՒՄ:

172. ԾԱՂԿԱՅՈՒՅՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄ—ОБРАЗОВАНИЕ СОЦВЕ-  
ТИИ Բույսերի զարգացման ֆենոլոգիական փուլ, երբ բույսերի տերևա-  
ծոցերում կամ ցողումի գագաթնամասերում անզեն աշբով նկատելի են  
ծաղկակոկոնները կամ ծաղկաբույզերը: Կիսաթփերի ու կիսաթփիկների  
վերին տերևածոցերում նկատելի են ապագա ծաղկաբույզերի ծածկոցա-  
տերևներից կազմված ու մեծ կոշտուկներ: Բոշիբերի տերևների փնջիկի  
կենտրոնում երեսում է մի քանի հասկիկներից կազմված ծաղկաբույզի  
գլխիկը:

173. ԾԱՂԿԱԿԻՐ ԸՆԳՅՈՒՂՆԵՐԻ ԱՃ—ОТРАСТАНИЕ ЦВЕТОНОС-  
НЫХ ПОБЕГОВ Բազմացման հատուկ ընձյուղներով օժտված բույսերի  
ինքնուրույն ֆենոլոգիական փուլ: Այդպիսի ընձյուղները հատկապես  
բնորոշ են վարդակավոր և կիսավարդակավոր բույսերին: Նրանց, ինչպես  
և հացազգիների այլ գենոփուլը հաճախ անվանում են ցողունակալում:  
Սկսված է համարվում այն օրը, երբ առաջին անգամ նկատվում է ծաղ-  
կակիր ընձյուղի երկարում, իսկ ավարտված, երբ նկատվում է գունալոր-  
ված առաջին կոկոնը, կամ բավականին զարգացած հասկը, գլխիկը:

174. ԾԱՂԿՄԱՆ ԳԽԱՀԱՏՈՒՄ—ОЦЕНКА ЦВЕТЕНИЯ Ծառաթփե-  
րի ծաղկման աչքալափով գնահատում ֆենոլոգիական դիտումների ժա-  
մանակ: Կան այդպիսի գնահատման տարրեր համակարգեր: Մասնագետ-  
ների հիմնական մասը ընդունում է ծաղկման վեց բալանոց համակարգը:  
0° ծաղկում չկա, 1° շատ թույլ ծաղկում (առանձին ծաղիկներ կան միայն  
աղատ աճող ծառերի ու թփերի վրա), 2° թույլ ծաղկում (բավարար ծաղ-  
կում են միայն աղատ աճող ծառերն ու թփերը, անկարեկներում ծաղկումը  
թույլ է), 3° միշին ծաղկում (աղատ: աճող ծառերն ու թփերը մի փոքր  
ավելի շատ են ծաղկած, քան նախորդ դեպքում, անկարեկներում ծաղկումը

բավարար է), 4<sup>o</sup> լավ ծաղկում (ազատ աճող թփերն ու ծառերը ծաղկած են առատորեն, իսկ տնկարկներում ծաղկումը միջակ է) և 5<sup>o</sup> գերազանց ծաղկում (առատորեն են ծաղկած ինչպես ազատ աճող ծառերն ու թփերը, այնպես էլ տնկարկները):

175. ՄԱՂԿՄԱՆ ՕՐԱՅՈՒՅՑՅ—ԿԱԼԵՆԴԱՐԵ ԸՎԵՏԵՆԻՅ Ամբողջ վեգուտացիայի ընթացքում, բայտ ամիսների և օրերի, գեղեցիկ ծաղկող բույսերի ընտրություն, հնարավոր երկար ժամանակահատվածում ծաղկող ծաղկանոցներ կամ ծաղկապատկերներ ստեղծելու նպատակով: Կատարվում է երկարամյա ֆենոլոգիական դիտումների միջոցով:

176. ՄԱՂԿՈՒՅՄ—ԸՎԵՏԵՆԻԵ Բույսերի զարգացման ամենահիմնական ֆենոլոգիական փուլերից մեկը: Այդ փուլի նշանները տարրեր շնորհ ծաղկող բույսերի համար տարրեր են: Զարգացած, վառ գոյնավորված ծաղկապատյան ունեցող ծաղիկների ծաղկապսակը լրիվ բացվում է: Էստ որում, առանձնասեռ ծաղկաբույսերի համար առէջքափոր և վարսանդավոր առանձնյակների ծաղկումը առանձին է նշվում: Վարսանդավոր ծաղկիկների վարսանդի սպիթի բերանը ստանում է իրեն բնորոշչափու, ձև և գույն: Քամու միջոցով փոշոտվող բույսերի՝ (բարդի, հացենի, ընկույզենի և այլն) պատաված փոշանոթներից, թեթև քամու ժամանակ կամ ձեռքով թիթե դիպելիս, թափվում է փոշին: Բազմամյա խոտարումսերի ու հացազգիների մի մասի (ցորեն, տարեկան, սորգո) ծաղկաթեփուկներն ու հասկաթեփուկները բացվում են, և փոշանոթները պատովում են: Վարսակի, զարու, կորեկի, բրնձի ծաղկման փուլի մասին բավականաշափումով կամ հուրանակալումով, որովհետև այդ հացազգիների ծաղկումը զրեթե համընկնում է հասկի կամ հուրանի զանգվածային զարգացմանը: Միամյա խոտարույսերի մանր, ծաղկապսակից զուրկ ծաղիկները սոլորաբար նկատելի են զառնում վառ վարդագույն կամ բաց գեղնավուն առէջքները հայտնվելիս: Մաղկում ֆենոլոգիական փուլը հիմնականում ստորաբաժանում են երեք հնթափուկերի՝ ծաղկման սկիզբ, զանգվածային ծաղկում և ծաղկաթափ: Մաղկումն սկսված է համարվում այն ժամանակ, երբ դիտվող տասը բույսից 2—3-ը արդեն ծաղկել են, մյուսները՝ զեր կոկոն են: Զանգվածային ծաղկման ժամանակ դիտվող բույսերի կոկոնների կեսից ավելին ծաղկած են: Մաղկաթափը սկսված է համարվում այն օրը, երբ դիտվող բույսերի վրա բացված ծաղիկներ համարյա շեն մնացել, պսակաթեթիկները թառամել և զանգվածաբար թափվում են: Քամու միջոցով փոշումով բույսերի ծաղկաբույլերը զաղարել են փոշի արտադրել, փոշանոթները գորշացել ու շրացել են ու զանգվածաբար թափվում են: Ավելի մանրամասն ֆենոլոգիական հետազոտությունների ժամանակ ծաղկման ֆենոփուլը ավելի մանր հնթափուկերի են ստորաբաժանում (առաջին ծաղիկ, լրիվ ծաղկում, առաջին թառամած ծաղիկ, ծաղկալարտ և այլն):

177. ՄԱՂԿԱՅԵՆՈՒՐԳԱ—ДЕНДРОФЕНОЛОГИЯ Ֆենոլոգիաի

ձյուղ, որն զբազվում է գեղազարդային ծառաթփերի ֆենոլոգիական զարդացման օրինաչափությունների ուսումնասիրմամբ:

178. ՍԻԼԵՐ—BCХОДЫ Մատղաշ բույսեր, որոնք առաջացել են սերմից կամ որևէ այլ սաղմից և իրենց կյանքի սկզբնական շրջանում կազմախոսորեն (մորֆոլոգիապես) տարբերվում են յովենիլ բույսերից (շաքիլների առկայությամբ, վերգետնյա օրգանների բացակայությամբ և այլն): Սիլերը հայտնվում են կամ գարնանը (գարնանային ծիլեր), կամ էլ աշնանը (աշնանային ծիլեր): Ֆենոլոգիական դիտումների ժամանակ նշվում են առաջին ծիլերի երեալը և ծիլերի զանգվածային տարածումը (դիտագաշտի մեծ մասում ծիլեր են երեսում):

## 4

179. ԿԱԹՆԱՅԻՆ ՀԱՍՈՒՆԱՅՈՒՄ—МОЛОЧНАЯ СПЕЛОСТЬ Հացազի բույսերի հասունացման ֆենոլոգիական փուլերից մեկը: Հատիկի երկարությունը հասնում է համարյա վերջնականացնելու ձևակորպվածի երկարությանը և գրավում է ծաղկի արտաքին թեփուկի ամբողջ խոռոչը, պահպանում է կանաչ գույնը: Մատների արանքում սեղմելիս նրա թագանթը պայթում է, և միշտ պարունակությունը դուրս է գալիս. վարսակինը և բրնձինը՝ հեղուկ կաթի նման, ցորենինը՝ կաթնագույն, ավելի թանձր հեղուկի ձևով: Այդ փուլի սկզբում բույսերը նույնպես կանաչ են, գեղնում են միայն ցողունի ստորին տերևները: Կաթնային հասունության ըսկըրում հավաքած և շրացրած հատիկը վախտ է, սակայն արդեն ընդունակ է ծեխու։ Եգիպտացորենի թելանման սյունիկները կորշանում են և շրանում, բայց կողքի փաթեթը դեռ պահպանում է կանաչ գույնը: Կողքի միշտն մասում հատիկն ունենում է սպիտակ կամ բաց գեղին գույն: Հատիկը սեղմելիս արտաքրվում է սպիտակ հեղուկ, որը գույնով և խտությամբ կաթի է նման:

180. ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՖԵՆՈԼՈԳԻԱ—ТЕРИОФЕНОЛОГИЯ ՏԵՇ ԿԵՆԴԱԿՆԵՐԻ ՖԵՆՈԼՈԳԻԱ:

181. ԿԱՐԱՄԲԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ—ЗАВИВАНИЕ КОЧАНА Կազմերի ֆենոլոգիական փուլ: Այն օրը, երբ կազմաբազվի աճման կետի շուրջ առաջանում են խիստ ոլորված տերևներ, իսկ ծաղկակազմերի վրա՝ ծաղկարութիւն բաց դեղնավուն գլխիկ:

182. ԿԱՄԱՎՈՐ ՖԵՆՈԼՈԳԻԱՆ ՑԱՆՑ—ДОБРОВОЛЬНАЯ ФЕНОЛОГИЧЕСКАЯ СЕТЬ ՍՈՀՄ աշխարհագրական ընկերության և նրա մասնաճյուղերի կամավոր թղթակից ֆենոլոգների ցանց: Դ. Ն. Կայգորոդի հիմնադրած (1896 թ.) ֆենոլոգիական ցանցի շարունակողն է: 1960—1970 թվերին ամբողջ երկրում կամավոր ֆենոլթղթակիցների թիվը շուրջ 3000—3500 էր: Դրանք ուսուցիչներ, անտառատնտեսության աշխատողներ, որսորդներ, պտղաբուլներ, մեղվապահներ, օդերևութաբանական կայանների աշխատակիցներ, պատանի բնասերներ են: Հայկական ՍՈՀ տա-

բածքում գործող կամավոր թղթակից ֆենոլոգների ցանցը զեկավարում է Հայկական աշխարհագրական ընկերության ֆենոլոգիական հանձնաժողովը:

183. «ԿԱՅԳՈՐՈԴՈՎԱՆՔԱՆ ՔԱՌԱԿՈՂԻԿՆԵՐԻ» ՄԵԹՈԴ—МЕТОД «КАЯ-

ГОРОДОВСКИЕ БРУСОЧКИ» Առանձին տարիների կամ աշխարհա-

գրական տարբեր վայրերի սեղոնային զարգացման ընթացքի զուգադրման

գծագրական մեթոդ: Միասնական մասշտաբով գծվում են երկարությամբ


յուրաքանչյուր սեղոնի տևողությանը համապատասխանող հորիզոնական

ուղղանկյուններ: Քառակողիկը բաժանվում է մի քանի մասերի՝ ըստ են-

թասեղոնների կամ այլ կոտորակված ժամանակահատվածների թվի:

Ներքեւում բերվում է օրացուցային ժամանակի մասշտաբը, ինչպես նաև

սեղոնի միջին բազմամյա ընթացքին համապատասխանող «բնականոն»



նկ. 3. Լենինգրադի շրջակայքի բնության տարբեր տարիների սեղոնային զարգացման համեմատումը «Կայգորոդովովյան քառակողիկներ» մեթոդով (Հեղինակ՝ Դ. է. Շուլց):

Ենթասեղոններ. 1. ձնհալք, 2. զարնան աշխուժացում, 3. կանաչ գարուն, 4. ամառնամուտ, 5. լիաման, 6. աշնանամուտ, 7. ուսիկ աշուն, 8. խոր աշուն, 9. ձմեռնամուտ և 10. ձմեռ:

Քառակողիկը եթե քննարկվող տարվա քառակողիկը «բնականոն» քառակողիկի համեմատությամբ ձախ է տեղաշարժված, ապա սեղոնը միջին բազմամյա ժամեկետից շուտ է սկսվել: Եթե այն աչ է տեղաշարժված, բազմամյա ժամեկետից շուտ է սկսվել: Քառակողիկի տեղաշարժման աստիճանը բնորոշում է բազմաթիվ տարիների միջին ընթացքից հիշյալ սեղոնի շեղման մեծությունը:

184. ԿԱՅՈՐԾԱԿՈՂԻԿՆԵՐԻՄ—ЗЕЛЕНАЯ СПЕЛОСТЬ Լոլիկի հա-  
սունացման փուլ, երբ պտղատու քիստի առաջին պտուղը հասել է ավելա-  
տեսակին բնորոշ մեծության, և պտղի գույնը դարձել է սպիտակականա-  
ցավում: Պտուղը կտրելիս պարզ նկատվում է, որ սերմանախցերը արդեն լրց-  
ված են հեղուկով:

**185. ԿԱՆԱԳՈՒՄ—ՅԵԼԵՆԵՆԻԵ Շառաթիերի ֆենոլոգիական փուլը**  
երբ տերևաբողբօչները արդեն բացվել են, բայց տերևաթիթեղիկները  
դեռ չեն հարթվել: Սաղարթավոր անտառները այդ շրջանում հեռվից թվում  
են կանաչ շղարշով ծածկված: Փշատերև ծառատեսակների այն պահն է,  
երբ մատղաշ ասեղնատերևների վերին ծայրերը սկսում են իրարից առանձ-  
նանալ: Այս ֆենոփուլը երբեմն սիսալմամբ նույնացնում են տերևաբացին:

**186. ԿԱՏՎԻԿՆԵՐԻ ՓԽԲԱՑՈՒՄ—ՐԱԶՐԱԽԼԵՆԻԵ ԸԵՐԵԺԵԿ**  
Քամու միջոցով փոշուլող ծառաթիերի զարգացման ֆենոլոգիական փուլ:  
Սկսվում է ձմեռած կատվիկների փխրեցման (երկարացման) առաջին  
նշանները նկատվելու (կեփ, լաստենի) կամ բողոքաթեփուկները թափ-  
վելու (ուռենի, կաղամախի) պահից:

**187\*. ԿԱՐԳԱՇԵՂՈՒՄ—ԱՀՈՄԱԼԻՅ ՈՐԵԿ ՄԵծության կամ այդ**  
երեւութիւ որոշակի տարվա ժամկետի շեղումը ֆենոլոգիական նորմայից  
կամ որեկ երեւութիւ միջին բազմամյա ժամկետից այս կամ այն կողմը  
(դրական կամ բացասական կարգաշեղում): Տե՛ս նկ. 4:


**188. ԿԱՐԳԱՇԵՂՄԱՆ ՄԵԹՈԴ—ԱՀՈՄԱԼԻՅ Բնության**  
սեղոնային զարգացումը բնութագրելու և ֆենոլոգիական բարտեղներ կազ-  
մելու մեթոդ, որը հիմնված է սեղոնային զարգացման ելեւյթների ո-  
րոշակի տարվա ժամկետները միջինից շեղվելու վրա: Տերմինն առա-  
ջարկել է Ն. Պ. Ստիոնվը:

**189. ԿԱՐԳԱՄԱԿԵՏ ՖԵՆՈՊՐՈԳНОՅ Հաշորդ տարվա կամ սեղոնի ֆենոլոգիական կան-**  
խատեսումից ավելի փոքր ժամկետի համար հաշվարկված կանխատեսում:

**190. ԿԱՐԳԱՏԵՎ ՎԵԳԵՏԱЦИ Բարձրեռնային բազմամյա**  
խոտարույսեր, որոնց զարգացման ֆենոլոգիական փուլերի ժամկետները  
շատ մոտ են: Հասկացության հեղինակը Ա. Պ. Ստեղնկոն է:

**191. ԿԱՐԳԱՏԵՎ ՖԵՆՈԼՈԳԻԿԱՆ ԴԻՏՈՒՄՆԵՐ—ԿՐԱՏԿՕԾՐԾԻՆԻ**  
ՖԵՆՈՊՐՈԳՆՈՅ Հաշորդ տարվա կամ սեղոնի ֆենոլոգիական կան-  
խատեսումից ավելի փոքր ժամկետի համար հաշվարկված կանխատեսում:  
**192. ԿԵՂԾ ԿՈԿՈՆԱԿԱՆԱԿՈՒՄ—ԼՈՋНАЯ ԲՈՒТОНИЗАЦИЯ Օշին-**  
դրեների ցողոնակալման և իրական կոկոնակալման միջև եղած միջանկ-  
յալ օղակ: Կոկոնները սկսում են ձեռվորվել այն ժամանակ, երբ ծաղկա-  
չութիւնի պատիճները արդեն համարյա ձեռվորված են:

**193. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԻԳՐԱЦИЯ ԺԻՎՈՏНЫХ Ապ-**  
րելատեղի կենսապայմոնների փոփոխմամբ կամ զարգացման լիաշը անով  
պայմանավորված կենդանիների տեղաշարժ՝ տարածության մեջ: Տար-  
բերվում են պարբերական (օրական, սեղոնային), ոչ պարբերական (երաշ-



Նկ. 4. Կարգաշեղում ՍՍՀՄ ելքոպական մասում 1937 թ.

Հուլիսին (հեղինակներ՝ Գ. է. Շուց և Վ. Վ. Շամբակսկի).

1. Հուլիսի առաջին կես, 2. Հուլիսի երկրորդ կես:

տի, հրդեհների, հեղեղների և այլնի ժամանակ), պասսիվ (ծովային հոսանքների, քամու և այլնի միջոցով) և ակտիվ միգրացիաներ:

194. ԿԵՆՏԱՐԱՆՆԵՐԻ ՖԵՆՈԼՈԳԻԱ.—ФЕНОЛОГИЯ ЖИВОТНЫХ  
ՖЕННОПАКИЯХИ ճյուղ, որն ուսումնասիրում է կենդանիների կյանքի սեղոնային փոփոխությունները:

195. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՅՈՒՄ—БИОЛОГИЧЕСКАЯ СПЕ-  
ЛОСТЬ СЕ'И СЕ'ИНԻԿԱԿԱՆ ՀԱՍՈՒՆԱՅՈՒՄ:

196. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՌԻԹՄ—БИОЛОГИЧЕСКИЙ РИТМ ԿԵՆ-  
ՍԱԲԱՆԱԿԱՆ պրոցեսների կամ երկույթների ինտենսիվության և բնույթի լիաշրջան տատանումներ: Դիտվում է համարյա բոլոր կենդանիների և բույսերի մոտ: Հնարավորություն է տալիս օրգանիզմներին հարմարվել շրջակա միջավայրի փոփոխություններին (օրական, սեղոնային և այլն):

197. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԶԱՐԴԱՅՄԱՆ ԶԵՐՄԱՍՏԻՑԱՆԻ ԿՈՐ—  
TEMPERATURNAЯ KРИВАЯ RАЗВИТИЯ BIОЛОГИЧЕСКОГО  
OBЪEKTA S' u ՖԵՆՈՂՈԳԻԱԿԱՆ ԿՈՐ:

198. ԿԵՆՍԱՁԱՆԳՎԱՄ—БИОМАССА Sարածության մակերեսի կամ  
տարողության միավորին բաժին ընկնող այս կամ այն բույսի (տեսակ,  
տեսակների խումբ, համակեցություն) զանգվածի կենդանի նյութի քանա-  
կը՝ արտահայտված քաշի միավորներով ( $q/m^2$ ,  $kg/m^2$ ,  $q/m^3$  և այլն): Կեն-  
սապահնակածը հնարավորություն է տալիս զնահատել ցամաքի առանձին  
հատվածների կամ ջրատարածության մթերատվությունը, որոշել կենդա-  
նիների որսի և այլնի հնարավորությունները:

199. ԿԵՆՍԱՁՐՈ—ЖИЗНЕННЫЙ НУЛЬ Զերմային սահման, որից  
ցածր բույսի կամ կենդանու զարգացումը անհնար է: Հնացած տերմին է,  
քանի որ յուրաքանչյուր բույսի կամ կենդանու համար այդ սահմանը  
տարբեր է:

200. ԿԵՆՍԱԾՈՒՆ ԳՈՐԾՈՒՆՆԵՐ—БИОТИЧЕСКИЕ ФАКТОРЫ Մի-  
ջավայրի գործուներ, որոնք առաջանում են բուսական և կենդանական օր-  
գանիզմների ազդեցությամբ: Օրինակ, առանձին բույսերի կամ բուսական  
համակեցությունների գոյության պայմանները՝ կապված ուրիշ բույսերի և  
կենդանիների կենսագործունեության հետ (ստվերում, համարնակություն,  
բուսահողի առաջացում և կոտակում, կենդանիների միջոցով սերմերի  
տարածում և այլն): Երբեմն կենսածին գործուներին են վերագրվում նաև  
մարդածին գործուները:

201. ԿԵՆՍԱԿԻՄԱ—БИОКЛИМАТ 1. Կլիմայական գործուների  
կոմպլեքս, որը պայմանավորում է կենդանի օրգանիզմների գոյությունը,  
զարգացումը և տարածումը: 2. Հստ ամերիկացի գիտնական Ա. Հոպկինսի՝  
գիտություն կենդանի բնության պրոցեսների, կլիմայի, տարվա սեզոնային  
ընթացքի և տեղանքի աշխարհագրական դիրքի փոխհարաբերությունների  
մասին: Զեսական մոտեցում է բնության սեզոնային երևույթներին, որով-  
հետեւ հաշվի չեն առնվում բույսերի յուրաքանչյուր խմբի կենսաբանական  
առանձնահատկությունները:

202. ԿԵՆՍԱԿԻՄԱՅԱԿԱՆ ՖՈՏՈՏՐԱԴՈՒՆ—БИОКЛИМИТАЛОГИЯ Գի-  
տություն մարդու, կենդանիների և բույսերի հիմնականում մշակովի բույ-  
սերի կենսական պրոցեսների ու ֆունկցիաների վրա կլիմայական գոր-  
ծուների ազդեցության մասին: XX դարի սկզբներին հայտնի ֆենոլոգներ  
Ն. Պ. Սմիռնովը և Ն. Ս. Շշերբինովսկին այդ գիտությունը նույնացնում  
էին ընդհանուր ֆենոլոգիային:

203. ԿԵՆՍԱԿԻՄԱՅԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ—БИОКЛИМАТИЧЕСКИЕ  
КАРТЫ S' u ՖԵՆՈՂՈԳԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ:

204. ԿԵՆՍԱԿԻՄԱՅԱԿԱՆ ՕՐԵՆՔ—БИОКЛИМАТИЧЕСКИЙ ЗА-  
КОН Զեսակերպել է ամերիկացի գիտնական Ա. Հոպկինսը, 1938 թվակա-  
նին: Օրենքի հությունը հետևյալն է. ա. բույսերի և կենդանիների սեզո-  
նային երևույթները գտնվում են կլիմայական գործուների ու տարբեր

աղդեցության տակ, բ. այլ գործոնների միանմանության դեպքում, Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտում բնության սեղոնային երևությունների սկաման ժամկետների փոփոխությունը աշխարհագրական լայնության յուրաքանչյուր 1°-ի, աշխարհագրական երկայնության 5°-ի և բարձրության 400 ոտնաշափի (մոտ 130 մետր) համար հավասար է 4 օրվա: Դեպք հյուսիս, արևելք և բարձրությամբ շարժվելիս, ֆենոփուլերի սկզբանից գարնանը և վաղ ամռանը ուշանում է, իսկ ամռան երկրորդ կեսին ու աշնանը համապատասխանորեն վաղ է սկսում, դ. ամենուրեք դիտվում է որոշ շեղում ժամանակի այս տեսական հաստատում մեծությունից, քանի որ երկու կամ ավելի կենսարանական կամ կլիմայական շրջաններում պայմանները երբեք լրիվ չեն համընկնում և հազվագեղ են միանման լինում մեկ մարդի երկու կամ ավելի կետերում:

Ժամանակակից հետազոտությունները ու միշտ են հաստատում այդ օրենքի համապարփակությունը: Հաստատված է, որ կախված ֆենոլոգիական երևութից, տարվա ժամանակակից ու դիտումների վայրի աշխարհագրական դիրքից, լայնական, երկայնական ու բարձունքային բազմամյա միշին՝ ֆենոլոգիական աստիճանագիտման մեծությունը բավականին փոփոխվում է: Կենսակլիմայական օրենքը միայն ամենաընդհանուր կերպով պատկերացում է տալիս տեղանքի աշխարհագրական դիրքից ֆենոլոգիական ժամկետների կախվածության մասին: Այդ օրենքը երբեմն անվանում են նաև Հոպկինսի կենսակլիմայական օրենք:

205. ԿԵՆՍԱՎԱՐՄԱՆ ՖԵՆՈЛОԳԻԱ—ԲԻՕԿԼԻՄԱΤԻԿԵՍԿԱՅ ՖԵՆՈԼՈԳԻԱ Հաճախ այդպես են անվանում ֆենոլոգիաի այն նյութը, որն ուսումնասիրում է երկրահամակարգերի սեղուային զարգացման ընթացքը: *Տե՛ս Ընդէւռնության Ֆենոլոգիա:*

206. ԿԵՆՍԱԶԵՎԿԱԿԱՆ ՖՈՐՄԱ Բույսերի խումբ, որն ունի արտաքին կառուցվածքի, զարգացման ուժմիքի և էկոլոգիայի կամ դրանց ամբողջության նման յուրահատկություններ: Այլ կերպ ասած, բուկսերի այնպիսի կազմաբանական տեսակ, որում միշավայրի ազդեցության տակ (որի հետ պատմականորեն կապված է) էկոլոգիական հարմարանքներ են մշակվել տարվա անբարենպատ եղանակին գոյությունը պահպանելու համար: Գոյության պայմանների փոփոխման հետ մի կենսաձեղ փոխարինվում է մեկ ուրիշով: Նույն կենսաձեղին կարող են պատկանել նման պայմաններում պարող, բայց կարգաբանական տարրեր խմբերի պատկանող բույսերը: Տարրերում են կենսաձեղերի վեց խմբեր, ֆաներոֆիտներ, քեմիկրիպտոֆիտներ, գեղիտաներ, հելիոֆիտներ, տերոֆիտներ: Այս խմբերից յուրաքանչյուրը նույնպես ունի ստորաբաժանումներ: Կենսաձեղերի բնախոսական (բույսերի արտաքին ձևի համակարգն է), ծառեր, թփեր, թփիկներ, կիսաթփեր, բարձանման բուկսեր, սուկուլենտներ, լիաններ, խոտաբույսեր, պտերանման բույսեր, մամուռներ և ստորակարգ բույսեր:

207. ԿԵՆՍԱՆՇԱՆԱՑՈՒՅՑ—ԲԻՕИНДИԿԱТОՐ Օրգանիզմ, տիսակ

կամ համակեցություն, որի առկայությամբ կամ վիճակով, ինչպես նաև վարքով (օրգանիզմների համար) դատում են միջավայրում տեղի ունեցած փոփոխությունների, այդ թվում աղտոտող բաղադրամասերի առկայության ու միջավայրի աղտոտման աստիճանի մասին: Կենսանշանացուցերի թվին են պատկանում նաև բուսատեսակներ կամ համակեցություններ, որոնց տարածումը պայմանավորված է միջավայրի որոշակի յուրահատկություններով, որը հնարավորություն է տալիս այդ կենսանշանացուցերն օգտագործել օգտակար հանածոների որոնման ու հետախուզման համար:

208. ԿԵՆՍԱՇՐՋԱՆ-ԲԻՕՑԻԿԼ, ՀԻՅՆԵՆԻ ՑԻԿԼ Զարգացման փուլերի ամբողջություն, որն անցնելով օրգանիզմը հասունանում է, սերունդ տալիս, ծերանում և մահանում: Օրինակ, միամյա խոտարույսի կենսաշրջանը բաղկացած է հետեւալ փուլերից՝ սերմերի ծրում, վեգետատիվ օրգանների զարգացում, ծաղկում, հասունացում և սերմերի ցրում, բույսի չորացում:

209. ԿԵՆՍԱՖՈՐՄԱ-ԲԻՕՖԵՆՈЛОԳԻЯ Ֆենոլոգիայի ճյուղ, որն ուսումնասիրում է օրգանիզմների առանձին խմբերի սեղոնային երկությունները: Ֆենոլոգիայի այս բաժնում միավորված են բույսերի, կենդանիների, թռչունների, ձկների, միջատների և գյուղատնտեսական ֆենոլոգիաները Անվանում են նաև մասնակի ֆենոլոգիա:

210. ԿԻՍԱՆԴՐԱԲԻ-ՊՈԼΥՊՈԿՈЙ 1. Երկարատև վեգետացիայով ձմեռնականաշ բույսերի ֆենոլոգիական փուլ, որի սկիզբն ընդունված է այն պահը, երբ դադարում է բնձյուղների աճը, իսկ դրանց վրայի տերևների կեսից ալվելին արդեն չորացած է: 2. Տափաստանային բույսերի անբարենպաստ ժամանակահատված, որի ժամանակ դրանց մեջ մասը օդի բարձր չերմաստիճանի ու խորշակների հետևանքով խոնավության խիստ պակաս է զգում:


211. ԿԻՍԱԾՆԴՐԱՌՈՒՄ-ՊՈԼΥՊԱՅԱ Բուսական համակեցության վեգետացիան դժվարացած, ընդմիջված, զանդաղեցված է:

212. ԿԻՍԱԿԱՆԱԶ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄ-ԲԼԱՆԺԵՎԱՅ СПЕЛООСТЬ Լոլիկի հասունացման ֆենոլոգիական փուլ, երբ ասացին պտուղները դասնում են գորշգեղնագույն: Բույսից անշատ հասունանալիս պահպանում են իրենց համը և պիտանի են տեղափոխման համար:

213. ԿԻՐԱՌԱԿԱՆ ՖԵՆՈLOGIYA-ՊՐԻԿԼԱԴНАЯ ՖԵՆՈЛОГИЯ Ֆենոլոգիայի ճյուղ, որն զբաղվում է ֆենոլոգիական դիտումների և հետազոտությունների ավանդական գիտության մեջ ու գործնականում կիրառելու հարավորությունների հարցով:

214. ԿԼԻՄԱԴИԱԳՐԱՄՄԱ Տարվա կիմայական պայմանների ընդհանուր բնութագրման գծագրական մեթոդ: Հատունի առանցքի վրա նշվում են ամիսները, օրդինատի առանցքը վրա ձախից՝ ամսական միջին չերմաստիճանը, աջից՝ տեղումների քանակը մմ-ով ( $10^{\circ}$ -ը համապատասխանում է 20 մմ տեղումներին): Եթե տեղումների

Կորը որևէ պահի չերմաստիճանի կորից ներքեւ է իշնում, ապա այդ ամբողջ ժամանակահատվածը համարվում է շորային և բույսերի աճի ու զարգացման համար՝ անբարենպաստ։ Ֆենոլոգիական նպատակներով այս մեթոդը որոշ շափով ձեռփոխված է։ Օրդինատի վրա տրվում են ոչ թե բազմամյա տվյալներ, այլ այն տարվա օդի չերմաստիճանն ու տեղումները, որի ընթացքում կատարվել են ֆենոլոգիական դիտումները։ Ցանկության գեպքում դիագրամի վրա կարող են պատկերվել կլիմայի այլ տարրեր նույնպես։ Հեղինակներն են Հ. Վալտերն ու Հ. Լիտբեր։ Նկ. 5։



Նկ. 5. Աշտարակի կլիմադիագրամ  
(Հեղինակ՝ Ֆ. Փ. Հայրապետյան)։

215. ԿԼԻՄԱՅԱԿԻՐ—КЛИМАТОГРАММА ՏԵ՛Ս ԿԼԻՄԱԴԻՐԵՆ:

216. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՒՄԱՆՆԵՐ—КЛИМАТИЧЕСКИЕ ФАКТОРЫ

Կլիմայի բնույթը բնորոշող գործոններ։ Դրանք են՝ աշխարհագրական լայնությունը, բարձրությունը ծովի մակարդակից, լեռնագրությունը, սառցային, ձնային և բուսական ծածկությունը, ծովային հոսանքները, հեռավորությունը օվկիանոսներից և այլն։

217. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՍԵԶՈՆ—КЛИМАТИЧЕСКИЙ СЕЗОН Աշխարհագրական միջավայրի կլիմայական բազագրամասերի տարեկան լիա-

շրջանի հարաբերականորեն մեկուսացված էտապ, որը բնութագրվում է կլիմայագոյացնող պրոցեսների և երևույթների միատեսակությամբ, միասնական ընդհանուր ուղղորդվածությամբ և արտաքնապես արտահայտվում է միջավայրի ազ բաղադրամասերի փոխապես կազմակորմամբ, լանդշաֆտի տեսույթների փոփոխմամբ։ Տարրեր կլիմայական գոտիներում կլիմայական սեղոնները տարրեր են։ Հասարակածային գոտում, որտեղ ամբողջ տարվա ընթացքում չերմաստիճանի փոքր տատանում ու հավասարաչափ խոնավություն կա, կլիմայական սեղոններ չեն առանձնացվում։ Մերձհասարակածային գոտիներում, որտեղ տեղումների տարրեկան ընթացքի լազ արտահայտված ժամանակահատվածներ կան, տարրերում են չոր և անձրևային կլիմայական սեղոններ։ Բարեխառն լայնություններում լավ արտահայտված են ինքնուրույն չորս կլիմայական սեղոններ (գարուն, ամառ, աշուն, ձմեռ)։ Բևեռային շրջաններում գարունը և աշունը կարճ, միջանկալ սեղոններ են։ Բարեխառն լայնությունների կլիմայական սեղոնների առանձնացման համար պայմանականորեն հիմք են ծառայում օդի միջին չերմաստիճանի հաստատում անցումները որոշակի սահմաններից։ Օրինակ, ձմեռը համարվում է սկսված, եթե օդի միջին չերմաստիճանը հաստատուի իջնում է  $0^{\circ}$ -ից, գարունը՝ եթե այն բարձրանում է  $0^{\circ}$ -ից, ամառը՝ եթե այն բարձրանում է  $15^{\circ}$ -ից, իսկ աշունը՝ եթե իջնում է  $15^{\circ}$ -ից։

218. ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՍԵԶՈՆԻ ՓՈԽ—ՓԱՅԱ ԿԼԻΜԱТИЧЕСКОГО СЕЗОНА Կլիմայական սեղոնի մաս։ Նախորդ սեղոնի պակասող և միաժամանակ հաջորդ սեղոնի աճող ազգեցությամբ ժամանակահատված է, որի ընթացքում լանդշաֆտի տեսքը համեմատաբար քիչ է փոփոխվում։

219. ԿԼԻՄԱՅԱՎԱՐԺՈՒՄ—АККЛИМАТИЗАЦИЯ Մարդուն օգտակար բուսատեսակներով բնական համակեցությունը հարստացնելու նպատակով նախկինում այդտեղ շաճող որեւէ բույսի կանխամտածված ներմուծում և գոյության նոր պայմաններին այդ բուսատեսակի հարմարեցում։

220\*. ԿՈԿՈՆԱԳԱՏՈՒՄ—ОБОСОБЛЕНИЕ БУТОНОВ Մաղկարույթերի ծաղկմանը նախորդող ֆենոլոգիական փուլ, եթե արդեն դուրս եկած ծաղկաբույզի կոկոններն առանձնանում են իրարից, և բաժակաթերթիկների տակից երեսում են պսակաթերթիկները։


221. ԿՈԿՈՆԱԿԱԼՈՒՄ—БУТОНИЗАЦИЯ Բույսերի զարգացման վաղ զարնանային փուլ, եթե տերեւածոցում, անզեն աշբով, նկատելի է ծածկաթեփուկից ազատված, փթթած ծաղկաբույզը՝ կոկոնը։ Աստիճածածկաթեփուկից ազատված, մեծաթիվ ծաղիկներից կազմված ծաղկաբույզը որոշ նարար բացվող, մեծաթիվ ծաղիկներից կազմված ծաղկաբույզը որոշ նարար կոկոնակալման փուլ ասելով հասկացվում է ծաղկաբույզը ծածկաթեփուկից կամ պատիճից դուրս գալու կամ ծաղկաբույզի ստորին լը ծածկոցից կամ պատիճից դուրս գալու կամ ծաղկաբույզի ստորին լը ծածկոցից կամ պատիճից դուրս գալու կամ ծաղկապսակը դեռ բաժակից չի երևում) և բերակում են՝ խտակոկոն (ծաղկապսակը դեռ բաժակից չի երևում)։

փիլրակովոն (երկում է ժաղկապսակը) ենթափուկեր: Տերևաբողբոջների համար այդ ֆենոլոգիական փուլը կոչվում է բողբօջառչում:

222. ԿՈՂԱՅԻՆ ԸՆՉՅՈՒՂՆԵՐԻ Ա.Ճ—РОСТ БОКОВЫХ ПОБЕГОВ  
ՏԵ՛Կ ԸՆՉՅՈՒՂԱՅԾ:

223. ԿՈՂԱՅԻՆ ԸՆՉՅՈՒՂՆԵՐԻ Ա.ՌԱԶԱՅՈՒՄ—ОБРАЗОВАНИЕ БО-  
КОВЫХ ПОБЕГОВ Վեգетації ֆенолоптическим феноменом: երբ բույսերի ստորին տերևածցերում երկում են առաջին ընձյուղները: Հաշազգիների այս փուլը կոչվում է բիոկապում:

224\*. ԿՐԻՆԱՍՆԱԿՈՒՄ—ВТОРИЧНОЕ ЦВЕТЕНИЕ Հաջորդ տար-  
վա համար սկզբնավորված բողբոջների վաղաժամ ծաղկում նույն տարում: Տեղի է ունենում ոչ միշտ և ոչ բոլոր բույսերի մոտ: Բնորոշ է հիմնա-  
կանում թփերին ու թփիկներին (օրինակ, ասպիրակ): Լինում է տաք ու խոնավ ամռան վերջում, աշնան սկզբում: Տարբերում են՝ կրկնածաղկման սկիզբ, զանգվածային կրկնածաղկում, կրկնածաղկման ավարտ ֆենո-  
փուլեր: Մաղկակիր ընձյուղների կրկնածի հետ կապված կրկնածաղկումը պետք է տարբերել ամբողջ տարին ծաղկող բույսերի ծաղկումից: Վեր-  
շիններիս առաջնային ընձյուղները շարունակում են աճել ու ծաղիկներ առաջացնել մինչև աշուն: Կրկնածաղկում չի համարվում նաև ձմեռա-  
յին կամ գարնանային վնասվածքներով պայմանավորված ուշ ծաղկումը: Կրկնածաղկումը բույսերի կյանքում բացասական երկույթ է: Այն նվա-  
զեցնում է այդ բույսերի հաջորդ տարվա ծաղկումն ու պտղաբերումը:



Նկ. 6. Միջին Ռւրալում աշնանացան տարեկանի ծաղկ-  
ման բազմամյա միջին կուտակագիր (հեղինակ՝ Վ. Ա.  
Բատմանով):

225\*. ЧИТАУЩИЕ РОДЫ—ВИРГИНИЙНЫЙ (ДЕВСТВЕННЫЙ)  
ПЕРИОД Умрдфакбенанаяхин համակեցությունների բուլսերի նախարազ-  
մացման (սաղմերի ծլումից մինչև բազմացման օրգանների առաջանալը)  
Համանակահատված:

226\*. ЧИТАУЩИЕ РОДЫ—КУМУЛЯТА Ֆենոլոգիական դիտումների ին-  
տեղրալ նկարագրական մեթոդի գծագրական պատկերում: Հատոնի ա-  
ռանցքը վրա նշվում էն ամսաթվերը, իսկ օրդինատի առանցքի վրա՝ կու-  
տակլած հաճախության (բաժնեհատը անցած հաշվարկային միավորների) տոկոսները: Կուտակագրով կարելի է օրերի վերածել կուտակված հաճա-  
խության մեզ հետաքրքրող ցանկացած տոկոսը: Դա հնարավորություն է  
տալիս վերականգնել պրոցեսի անմիջականորեն շղիտված կարերագույն  
երեսովների ժամկետները: Տե՛ս նկ. 6:

## Հ

227. ՀԱՅԱՍՏԱՆ—ОТТЕПЕЛЬ Բարեխառն ու բարձր լայնությունների  
ձեռագիր ֆենոլոգիական երեսով, որը սովորաբար առաջանում է ընդ-  
հանուր բացասական չերմաստիճանների պայմաններում այլ շրջաններից  
քաք՝ դրական չերմաստիճանների, օդային զանգվածների ներթափանց-  
ման հետևանքով:

228. ՀԱՄԱՓԱՄԱԿԱՅԻ ՖԱՐՏԵԶ—СИНХРОННАЯ  
ФЕНОЛОГИЧЕСКАЯ КАРТА Ֆենոլոգիական բարտեզ, որի վրա  
պատկերված է, թե զարգացման ո՞ր փուլում է գտնվում նույն բուլսի  
առանձնյակների մեծամասնությունը որոշակի օրում: Այդ բարտեզի կազմ-  
ման համար անհրաժեշտ ֆենոլովյանները ստանում են որոշ հեռավորու-  
թյունից կատարված դիտումներով: Կանոնավոր դիտումների դեպքում,  
մեծ հեռավորության վրա բուլսերի զարգացման առանձին փուլերի որոշ-  
ման հնարավորությունը այս մեթոդը պիտանի է դարձնում մեծ տարա-  
ծությունների ֆենոլոգիական վիճակը արագ բարտեզագրելու համար:

229. ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ «ԳԻՄԱՊԱՏԿԻԲԻ» ՓՈՓՈԽՈՒՄ—СМЕНА  
ԺԼИКА» СООБЩЕСТВА Սեղոնային պայմանների ազդեցությամբ բու-  
րական համակեցության բնույթի ու արտաքին տեսքի արմատական փո-  
փոխում (մի կենսաձևի գերիշխումից անցնում մեկ ուրիշ կենսաձևի գեր-  
իշխման), այսինքն՝ բուլսերի մի խումբը նույն տեղում կարծես թե փո-  
խարինվում է մակ ուրիշով:

230. ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒՅԹ—ОБЩИЙ АСПЕКТ  
СООБЩЕСТВА Տե՛ս ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՍԵԶՈՆԱՅԻՆ ՏԵՍՈՒՅԹ:

231. ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՏԵՍՈՒՅԹ—ЧАСТНЫЙ АСПЕКТ  
СООБЩЕСТВА Համակեցության բուլսերի բազմազան փուլերն ար-  
տացող և ամբողջապես եղանակային պայմաններից կախված տեսույթ:  
Տարբեր տարիներին կարող է տարբեր ձևով արտահայտված լինել: Հա-  
մակեցության տեսույթների ստորաբաժանումը սեղոնային և մասնակին

պայմանական է, քանի որ էկուոզիֆալքս հավասարարժեք տեսակների ծաղկման, պտղաբերման կամ վեգետացիայի, հետևանքով առաջացող տեսույթները նախապատճառաված են տեսակների նախորդ խմբերով, և առանց սկզբային տեսույթների չեն կարող լինել հաջորդները:

232. ՀԱՄԱԿԱՐԱՎՈՐԻՄՆԵՐԻ ՍԵՍՈՒՅԹ—СЕЗОННЫЙ АСПЕКТ СООБЩЕСТВА *Տարիների ընթացքում համեմատարար միանման կրկնվող, կլիմայական պայմաններով պայմանավորված տեսույթ*: Այս տեսույթի անցման արագությունը կախված է տարվա օդերևութաբանական պայմաններից և վեգետատիվ փուլերի փոփոխությունց: *Տերմինն առաջարկել է Ի. Բ. Բորիսովան:*

233. ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ԱՐՄԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՅՈՒՄ—ОБРАЗОВАНИЕ УЗЛОВЫХ КОРНЕЙ Գյուղատնտեսական մշակովի բույսերի արմատների զարգացման ֆենոլոզիֆական փուլ: Առաջին իսկական տերեկի հանգուցից երեսում են արմատները: Այդ ֆենոլոզիֆական փուլը դիտելու համար, բույսի երրորդ տերեկը երեալուց հետո, դիտալաշտի շրոս տարրեր մասերից զգուշությամբ հանվում են ծաղկան բույսեր, արմատները մաքրվում են հողից և զննվում: Փուլի սկավելը նշվում է այն ամսաթվով, երբ հանված բույսերի մեծամասնության հանգուցային արմատները նկատվում են:

234. ՀԱՇՎԱՐՔԻ ԱԶԳԱԶԱՓԱԿԱՆ ՄԵԹՈԴ—ГЛАЗОМЕРНЫЙ МЕТОД УЧЕТА *Մառափերի տերենների աշխանային շրացման հաշվարքի մեթոդ*: *Տերենների մահացումը գրանցվում է Էրկու թվերից կազմված ինքերսով*: Այդ թվերից մեկը աշխաչափով բնութափրում է ծառանմուշի կամ դիտարկվող տնկարկի տերենների գունափոխման աստիճանը (մինչև 10 բալ), իսկ մյուսը՝ տերենաթափի աստիճանը (նույնպես 10 բալ): Օրինակ, կազմի արեւելյան՝ 3.10:4—2. նշանակում է, որ դիտարկվող կաղնուու տնկարկներում հոկտեմբերի 3-ին տերենների 4/10 գունաթափվել են, 2/10-ը՝ թափվել:

235. ՀԱՇՎԱՐՔԻ ՄԻԱՎՈՐ—УЧЕТНАЯ ЕДИНИЦА *Ֆենոլոզիֆական դիտումների ընթացքում կատարվող հաշվարկների պայմանական միավորը թույսերի համար, սովորաբար, որպես հաշվառքի միավոր վերցվում է առանձնյակը (ծառ, թուփ, ցողուն): Երբեմն, երբ բռաստեսակն առատորեն ու խիտ կերպով ծածկում է դիտադաշտը, և առանձնյակների առանձնացումը դժվար է, որպես հաշվառքի միավոր վերցվում է որոշակի շափուերի փորձադաշտը: Անկենդան բնության օբյեկտների (ձնածածկ, հող և այլն) դիտումների ժամանակ հաշվառքի միավոր են ընդունում փորձադաշտը կամ դրա մակերեսույթի որոշակի կետը (օրինակ, չերմաշափը հողը մտցնելու տեղը կամ բարձրությունը շափելու կետը և այլն): Հաշվառքի միավորներին ներկայացվող հիմնական պահանջն է, որպեսզի դրանք հեշտորեն ճանաչվեն ու սահմանադասվեն, ինչպես նաև բավականին շատ լինեն ուսումնասիրվող հողամասում:*

236. ՀԱՄԱԿԱՐԱՎՈՐԻՄ—КОЛОШЕНИЕ *Հացազգիների ֆենոլոզիֆական փուլ: Սկաված է համարվում, երբ հասկը կիսով շափ դուրս է եկել վերին*

տերևածոցից: Այս ֆենոփուլը ստորաբաժանում են երեք ենթափուլի: Հասկալման սկիզբ (ֆենոփուլը դիտվում է բույսերի 10 տոկոսի մոտ), զանդվածային հասկակալում (ֆենոփուլը դիտվում է բույսերի կեսից ավելիի մոտ) և հասկակալման ավարտ (դիտադաշտի բույսերի 90 տոկոսը լրիվ հասկակալած է):

237. ՀԱՍՏԱՏՈՒՆ ԳՅՈՒՆԱԾԱԽԿՈՒՅԹ—ПОСТОЯННЫЙ СНЕЖНЫЙ ПОКРОВ Զյունածածկով, որը մնում է մեկ և ավելի ամիս՝ առանց ընդմիջումների:

238. ՀԱՍՈՒՆ ՌՈՒՅՆԵՐ—ВЗРОСЛЫЕ РАСТЕНИЯ Բույսերի հասկային խմբերից մեկը: Այդ խմբին են պատկանում սեռական բազմացման ունակ առանձնյակները: Հնարավոր է, որ դրանց մեջ լինեն նաև բույսեր, որոնք բազմացման օրգաններ չեն առաջացնում (վեգետատիվ առանձնյակներ) և այդ ունակությունը կորցրած ծեր բույսեր:

239. ՀԱՍՈՒՆ ՊՏՈՒՊ—ЗРЕЛЬНЫЙ ПЛОД Պտուզների և սերմերի հասունացման ֆենոլոգիական փուլ: Պտուզները և սերմերը ստանում են իրենց հասունացած վիճակին բնորոշ գույն, չոր կուլող պտուզները դառնում են շոր, հյութալի պտուզները՝ փափուկ (հացազգիների հատիկները լրիվ ամուր են, չեն ծովում, և պատյանի պարունակությունը դորս չի մղվում):

